

DOI: 10.57192/18291864-2025.4-38

**Սարգիս Գ. Պետրոսյան** (Գյումրի)

*Պատմ. գիյր. դոկտոր*

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայազխտական հետազոտությունների կենտրոն

Vahe1996@mail.ru

ORCID: 0000-0002-3208-9674

**Լուսինե Ս. Պետրոսյան** (Գյումրի)

*Պատմ. գիյր. թեկնածու*

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայազխտական հետազոտությունների կենտրոն

LusineS.P@gmail.com

ORCID: 0009-0008-8880-6936

**ՎԱՂ ՀԵԼԼԵՆԻՍՏԱԿԱՆ ԴԱՐԱՇՐՋԱՆԻ  
ՀԱՅՈՑ ԱՌԱՍՊԵԼԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ  
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎՍ ՄԻ ԱՂԲՅՈՒՐ\***

**Անփոփում**

Հայկական վաղիելլենիստական արվեստի ուշագրավ նմուշ է եղել մարմարե քանդակագարդ սալը, որը մեզ չի հասել, բայց առկա է նրա լուսանկարը: Այն կեղծիք չէ, նրա պատկերների պաշտամունքային և գաղափարախոսական հենքը բխում է Զևս-Արամազդի՝ որպես Հայոց գերագույն աստծու և թագավորող ընտանիքի հովանավորի ըմբռնումից: Պատկերաքանդակի կենտրոնական կերպարը՝ ցլագլուխը, խորհրդանշում է Զևս-Արամազդին՝ որպես Ամպրոպի և Արևի աստված: Մարմարե սալի պատկերներն ունեն սիմետրիայի առանցք, որից ձախ՝ թագուհի մայրն է՝ դուստրերով, իսկ աջ՝ երկարամորուք հայրը (հավանաբար՝ քրմապետը)՝ որդիներով: Ձախ կողմիները բարձրացրել են ձախ ձեռքեր-

---

\* Հոդվածն ընդունվել է տպագրության 26.12.2025:

րը, աջ կողմինները՝ աջ ձեռքերը: Չախ կողմում պատկերված թագուհին նվիրաբերում է հնգյակ կազմող փունջ (5-ը Անպրոպի աստծու խորհրդապաշտական թիվն է), իսկ աջ կողմում պատկերված տղամարդը՝ եռյակ կազմող փունջ (3-ը Արևի աստծու խորհրդապաշտական թիվն է): Չախ կողմում մոր հետ պատկերված դուստրերը երեքն են, աջ կողմում հոր հետ պատկերված որդիները ևս երեքն են: Դրանք համապատասխան են դրված Հայկ աստծու գավակների՝ աստղեր դարձած թվին, որոնցից՝ դուստրերը Հայկի (Կշիռ) համաստեղության առաջին մեծության աստղերն են, իսկ որդիները՝ երկրորդ մեծության:

Մարմարե պատկերաքանդակը, մեր կարծիքով, նաև պատմական սկզբնաղբյուր է և արտացոլում է մ.թ.ա. 3-րդ դարի կեսին Մեծ Հայքում տեղի ունեցած պատմական իրադարձությունները՝ Երվանդունի արքայադուստրն ամուսնացել էր Հայոց քրմապետի հետ և լույս աշխարհի բերել (ըստ Մովսես Խորենացու՝ ապօրինի խառնակությամբ) ապագա թագավոր Երվանդ Վերջինին (մոտ մ.թ.ա. 222-201թթ.) և Երվազ քրմապետին: Հոր հետ պատկերված տղաներից ավագը ապագա թագավորն էր (ավագ որդին էր թագաժառանգ լինում), իսկ կրտսերը՝ երկար վարսերովը՝ ապագա քրմապետը: Մարմարե պատկերաքանդակը հաստատում է Մովսես Խորենացու պնդումը Երվանդ Վերջինի՝ հայրական գծով բուն արքայատոհմից (Երվանդունի, ըստ Խորենացու՝ Արշակունի) չլինելու վերաբերյալ: Նա մայրական գծով էր Երվանդունի:

Անանուն պատմիչը (Մեբեոս) իր բերած Հայոց արքայացանկում Երվանդ Վերջինի հորն Արշակ է կոչում: Բայց իրականում սա եղել է ոչ թե նրա հայրը, այլ մորական պապը՝ Երվանդունի տոհմից: Բանն այն է, որ հնում ընդունված չէր մորը ներառել տոհմացանկում, նրան փոխարինելու էր մորը տոհմակից տղամարդը:

Այն, որ ոչ թե Արտաշես I-ն է մոր կողմից Երվանդունի եղել, այլ Երվանդ Վերջինը, հաստատվում է նաև Արտաշես I-ի (մ.թ.ա. 189-160 թթ.) Երվանդական արամեագիր տոհմանվան միջոցով: Ընդ որում նույն տոհմանվան զուտ հայերեն Երվանդեան տարբերակով է հայտնի եղել նաև նրա թոռը՝ Տիգրան II Մեծը (մ.թ.ա. 95-55 թթ.): Այս տոհմանունների և Երուանդ/Արուանդ արքայանվան հիմքում հնդեվրոպական ծագումով \*peruht- (-հ.-ե. \*per- «խփել», «հարվածել») նախաձևն է:

**Բանալի բառեր** – Մարմարե սալ, հելլենիստական, պաշտամունք, Զևս-Արամազդ, Անպրոպի և Արևի աստվածներ, Երվանդունի, արքայատոհմ, Երվանդ, Արշակ:

**Sargis G. Petrosyan** (Gyumri)

*Doctor of Historical Sciences*

**Lusine S. Petrosyan** (Gyumri)

*PHD of Historical Sciences*

## **ANOTHER SOURCE OF ARMENIAN MYTHOLOGY AND HISTORY FROM THE EARLY HELLENISTIC PERIOD**

### **Abstract**

A marble slab that hasn't survived is known as an example of Armenian early Hellenistic art, but fortunately, we have a photograph of it. It is not a counterfeit. The cult and ideological basis of its images stems from the understanding of Zeus-Aramazd as the supreme god of ancient Armenia and patron of the ruling family. The central image on the marble slab, bull's head, symbolizes Zeus-Aramazd as both the god of thunder and the sun. The images on the slab have their own axis of symmetry, to the left of it is a mother queen with her daughters, and to the right is the long-bearded father (probably the high priest) with his sons. Those on the left have raised their left hands, and those on the right, their right hands. The queen depicted on the left offers a five-part bundle to the god (5 is the mystical number of the god of Thunder), and the man depicted on the right offers a three-part bundle (3 is the mystical number of the god of the Sun). There are three daughters depicted on the left with the mother, and likewise three sons depicted on the right with the father. They correspond to the number of children of the god Hayk who became stars of the constellation Hayk (Orion). The daughters are stars of the first magnitude in the Hayk constellation, and sons are stars of the second magnitude.

In our opinion, the marble slab is also a historical document and reflects events that took place in Greater Armenia in the middle of the 3rd century BC. A princess from the Yervandid dynasty married the High Priest of Armenia and gave birth (according to Movses Khorenatsi, in an “illegitimate relationship”) to twin brothers - Yervand and Yervaz. The eldest of the brothers depicted together with their father was to become the future king (the eldest son became the heir to the throne), i.e. Yervand the Last (c. 222-201 BC), and the youngest of the brothers (the one with long hair) will be a future priest, i.e. the High Priest of Armenia, Yervaz. The marble slab confirms Movses Khorenatsi's assertion that Yervand the Last did not belong to the original royal dynasty of Yervandids (according to Khorenatsi-the Arshakids). He is a Yervandid on his mother's side.

An Anonymous historian (Sebeos) in his list of Armenian kings, names Yervand the Last's father as Arshak. But in reality, this Arshak was not his father, but his maternal grandfather-from the Yervandid dynasty. The fact is that in ancient times, it was not accepted to include the mother in the genealogy; she had to be replaced by a man from the mother's lineage. So Artashes I (189-160 BC) belongs to the original royal dynasty of Yervandids and not Ervand the Last. It is also confirmed by the Aramaic lineage name of Artashes I (189-160 BC) - Yervandakan. Moreover, his grandson, Tigran II the Great (95-55 BC), was also known by the Armenian variant of the same lineage name -Yeruandean. These lineage names and the royal name Yervand/Yeruand lies in the proto-form of Indo-European origin \*perunt- (< I.-E. \*per- "to beat," "to strike").

**Key words** – Marble slab, Hellenistic, worship, Zeus-Aramazd, Gods of Thunder and Sun, Yervandids, royal dynasty, Yervand, Arshak

**Саргис Г. Петросян** (Гюмри)  
*Доктор исторических наук*

**Лусине С. Петросян** (Гюмри)  
*Кандидат исторических наук*

## **ЕЩЕ ОДИН ИСТОЧНИК АРМЯНСКОЙ МИФОЛОГИИ И ИСТОРИИ РАННЕЭЛЛИНИСТИЧЕСКОЙ ЭПОХИ**

### **Резюме**

Образцом армянского искусства раннего эллинизма была мраморная плита, которая до нас не дошла, но, к счастью, у нас есть ее фотография. Это не подделка. Культовая и идеологическая основа ее изображений исходит из понимания Зевса-Арамазда как верховного бога древней Армении и покровителя правящей семьи. Центральный образ плиты – бычья голова – символизирует Зевса-Арамазда одновременно как бога Грома и Солнца. Изображения на плите имеют свою ось симметрии, слева от которой мать-царица со своими дочерьми, а справа – длинноротый отец (вероятно, верховный жрец) со своими сыновьями. Находящиеся слева подняли левые руки, а находящиеся справа - правые руки. Изображенная слева царица преподносит богу пучок из пяти частей (5 - мистическое число бога Грома), а изображенный справа мужчина - пучок из трех частей (3 - мистическое число бога Солнца). Дочерей, изображенных слева с матерью, три, и сыновей, изображенных

справа с отцом, также трое. Они соответствуют числу детей бога Айка, ставших звездами созвездия Айка (Орион). Дочери – звезды первой величины созвездия, а сыновья – второй величины.

Мраморная плита, по нашему мнению, является историческим памятником, на которой отображены события, произошедшие в Великой Армении в середине III века до н.э. Принцесса из рода Ервандидов вышла замуж за Верховного жреца Армении и родила (согласно Мовсесу Хоренаци, в «незаконной связи») братьев-близнецов – Ерванда и Ерваза. Старший из братьев, изображенных вместе с отцом, должен был стать будущим царем (наследником престола становился старший сын), т.е. Ерванд Последний (ок. 222-201 гг. до н.э.), а младший из братьев (длинноволосый) – будущим жрецом, т.е. Верховным жрецом Армении Ервазом. Мраморная плита подтверждает утверждение Мовсеса Хоренаци о том, что Ерванд Последний по отцовской линии не принадлежал к исконной царской династии Ервандидов (по Хоренаци, Аршакидов). Он Ервандид по материнской линии.

Анонимный историк (Себеос) в приведенном им списке армянских царей называет отца Ерванда Последнего Аршаком. Но на самом деле этот Аршак был не его отцом, а дедом по материнской линии из рода Ервандидов. Дело в том, что в древности не было принято включение матери в родословную, ее должен был заменять мужчина из рода матери.

То, что не Арташес I был Ервандидом по матери, а Ерванд Последний, подтверждается также арамеоязычным родовым именем Арташеса I (189-160 гг. до н.э.) – **Ервандакан**. Причем под армянским вариантом того же родового имени **Еруандеан** – был известен также его внук, Тигран II Великий (95-55 гг. до н.э.). В основе этих родовых имен и царского имени **Ерванд/Еруанд** лежит праформа индоевропейского происхождения *\*perunt-* (<и.-е. \*рег- «бить», «ударить»).

**Ключевые слова** – мраморная плита, эллинистический культ, Зевс-Арамазд, Боги Грома и Солнца, Ервандиды, царская династия, Ерванд, Аршак.

## Մուտք

1903 թ. Թիֆլիսում լույս տեսնող հայկական «Նոր դար» լրագիրը (թիվ 135) նամակ էր ստացել հին հայկական մարմարե քանդակագարդ սալի վերաբերյալ: Նամակի հեղինակն ուղարկել էր նաև դրա լուսանկարը՝ չափսային նշումներով (երկարությունը 26,4, լայնությունը 22 սմ, հաստությունը 4,4 սմ): Լուսանկարը գիտական շրջանառության մեջ դրած Գարեգին Լևոնյանը նրա մեկնաբանության իր առաջարկած մոտեցումներից երրորդում կասկածի տակ էր առնում ստորին մասի երկտողանոց անընթեռնելի արձանագրության և, առհասարակ, պատկերաքանդակի իսկությունը՝ 1941 թ. հրատարակած իր կարճառոտ հոդվածում (Լևոնյան, 1941, 69-70; Ազիզբեկյան, 2024): Այնուհետև Գր. Ղափանցյանը 1945 թ. հրատարակած իր մեկնագրության մեջ (Ղափանցյան, 1945) ներկայացնում էր խոսքի առարկա մարմարե սալի լուսանկարը, բայց չէր հստակեցնում սեփական մոտեցումը նրա իսկական կամ կեղծիք լինելու վերաբերյալ: Այդուհանդերձ, Արա Գեղեցիկի պաշտամունքում եզան բաղադրիչ պաշտամունքի ամնչության հետ կապված՝ նա գրում էր, որ մարմարե պատկերաքանդակին «նույնպես տեսնում ենք եզի պաշտամունք: Ջոհված եզի գլուխը և առջևից կախված մորթին դրված են բագինի վրա, երկու կողմերից վառվող ջահերով: Աջ կողմից մի թագավոր խեթական-փոյուզական գլխարկով և հասկերի փնջով, իր տղաների հետ, իսկ ձախ կողմից՝ թագուհին հասկափնջով և աղջիկներով պաշտամունք են մատուցում, երեխաներն էլ ձեռնատարած՝ կճուճով յուղ են դրել աստիճանների վրա: Սա ոմանց կողմից համարվում է կեղծիք (այս մասին կարելի է կարդալ Գ. Լևոնյանի հոդվածում. «Սովետ. արվեստ», 1941 թ., № 2-3), բայց մեզ համար **կարևոր են քանդակի նախատիպը, պատկերացումը, որը զուտ երևակայություն չէր կարող լինել**» (Ղափանցյան, 1945, 148-149): Մեր ընդգծած բառերը բացահայտում են այս հարցում Գր. Ղափանցյանի ցուցաբերած խորաթափանցությունը, որը ցավոք ցանկալի արդյունքի չի հասցրել: Ըստ երևույթին, դրան խանգարել են պատկերաքանդակի լուսանկարի տակ՝ «Ջոհված եզի պաշտամունք (Կովկասից)՝ հին հայկական և վրացական երկտող արձանագրությամբ» բառերը (Ղափանցյան, 1945)<sup>2</sup>: Բերված միտքը (կրկնված նաև բուն տեքստում) մենք համարում ենք ժամանակի տուրքը կովկասյան ժողովուրդների «եղբայրական» անցյալին:

<sup>2</sup> Մենք օգտվում ենք այդ գրքում առկա լուսանկարից (Ղափանցյան, 1945, նկ. 7)



1.Ձախ/աջ հակադրամիասնության արտացոլումները  
մարմարե պատկերաքանդակում

Հայկական լեռնաշխարհում ամպրոպային և արևային աստվածությունների խորհրդանիշի դերում ցույր հանդես է եկել դեռևս Նախնադարում: Դրա առարկայական վկաներից են բրոնզիդարյան «վիշապ» քարակոթողները, որոնք դիտարկվող քանդակագարդ սալիկի հետ որոշակի պատկերագրական ընդհանրություններ են բացահայտում: Դրանց առթիվ Մ. Աբեղյանը գրում է. «Այդ արձանների վրա կա «եզան» գլուխ կաշիով և առաջի ոտներով: Ինչպես բացատրում են, և իմ կարծիքով՝ ճիշտ, դա զոհաբերության նշան է: Բայց դա եզան գլուխ ու կաշի չէ, այլ երնջի... Իբրև զոհի կենդանի մեզանում հիշվում է, սակայն, և սպիտակ ցուլը: Հայտնի է, որ մատաղի կենդանուց եկեղեցուն նվիրում էին զոհի գլուխը, կաշին և երիները (առաջի ոտները), որոնք և գծագրված են ձկնակերպ կոթողների վրա» (Աբեղյան, 1975, է, 166): Մ. Աբեղյանի կարծիքով՝ գլուխը երնջի է, որովհետև այդ կոթողները Աստղիկ/Դերկետո դիցուհուն ձոնված արձաններ են (Աբեղյան, 1975, 165-166): Բայց ցլագլխի շուրջ պատկերված զույգ թռչունները այդ դիցու-

հու սրբազան խորհրդանիշներ, իսկ նրա երկու կողմի մեկական «եռանկյունիները»՝ նրան ձոնված Արուսյակ (Վեներա) մոլորակի երկու երևումների պատկերումներ համարելիս նա իրավացի է (Աբեդյան, 1975, 166): Հավելենք, որ դրանք՝ իբրև ձկնակերպ կոթողի կենտրոնական խորհրդանիշ ցլագլխի խորհրդանշած ամպրոպային և արևային աստվածների պաշտամունքների լրացումներ, նրանց համեմատ երկրորդային են: Այդուհանդերձ, կոթողում դրանք ցլագլխի հետ միասնության մեջ են դիտված: Իսկ մարմարե պատկերաքանդակին Արուսյակի երկու երևումը՝ լուսաբացից առաջ որպես Լուսաբեր, և մայրամուտից հետո՝ որպես Գիշերավար, ներկայացված է բազինին դրված, ցլագլխից աջ և ձախ պատկերված վառվող/լուսատու ջահերով:

Հայտնի է, որ առասպելաբանական ձախ/աջ հակադրամիասնությունը պայմանավորել է ինչպես իգական/արական, այնպես էլ մութ/լույս, ամպամած օր/պայծառ օր, գիշեր/ցերեկ և այլ հակադրամիասնությունները (Гамкрелидзе, Иванов, 1984, 790-794): Դա լավագույնս արտացոլված է «ամեն ինչի արարիչ» Պրաջապատիի մասին հին հնդկական առասպելում: Նա աջ ձեռքով ցերեկից ստեղծել էր դևներին՝ սպիտակ աստվածներին, իսկ ձախ ձեռքով գիշերից ստեղծել էր ասուրներին՝ սև աստվածներին (Мелетинский, 2003, 662): Նույնպիսի մոտեցում է առկա նաև մեր մարմարե սալիկին: Նրա վրա ամուսնական գույգ կազմած տիկինը պատկերված է պատկերաքանդակի ձախ մասում և Յլագլխին ընծայաբերումը կատարում է ձախ ձեռքով, իսկ ամուսինը աջ մասում է և նվիրաբերումը կատարում է աջ ձեռքով: Յլագլխին աղերսանքով դիմող նրանց երեք դուստրերը գտնվում են մոր շրջապատում և բարձրացրել են ձախ ձեռքերը, իսկ հոր շրջապատում գտնվող իրենց որդիները բարձրացրել են աջ ձեռքերը: Փաստորեն գործ ունենք ձախ/աջ և իգական/արական հակադրամիասնությունների համադրումների պատկերային դրսևորումների հետ:

Մարմարե պատկերաքանդակն ունի համաչափության երևակայական առանցք, որն անցնում է ցլագլխի ու բազինի մեջտեղով և վերջինին փռված ցլամորթու պոչով: Դրանով պատկերաքանդակի ամբողջ կոմպոզիցիան բաժանվում է երկու՝ ձախ և աջ մասերի: Գ. Լևոնյանի դիտարկումով դրանք իրար նկատմամբ համաչափ են կատարելապես (Լևոնյան, 1941, 69) : Ըստ այդմ, ցլագլուխը՝ որպես առանցքով կիսված ամպրոպային (ձախում) և արևային (աջում) ամբողջություն, նույնպես երկու կեսից բաղկացած հակադրամիասնություն է ըմբռնվել: Ուրեմն պատկերաքանդակի ձախ կեսը զբաղեցրած իգական սեռի ներկայացու-

*Վեմ համահայկական հանդես, ԺԷ (ԻԳ) տարի, թիվ 4 (92), եռլետեմբեր-դեկտեմբեր, 2025*

ցիչներն այն պաշտելու էին իբրև Ամպրոպի աստծված, իսկ աջ կեսը զբաղեցրած արական սեռի ներկայացուցիչները՝ իբրև Արևի աստծու խորհրդանիշ: Մարմարե պատկերաքանդակի հեղինակները պահպանել են նաև համապատասխան աստվածներին հատկացված թվերի խորհրդապաշտական իմաստը: Թագուհին զոհաբերում է հինգմասանի փունջ՝ 5-ը Ամպրոպի աստծու թիվն է, իսկ իր ամուսինը՝ երեքմասանի փունջ՝ 3-ը Արևի աստծու թիվն է:

## 2. Ցուլը և ցլագլուխը՝ Ամպրոպի աստծու խորհրդանիշ

«5» թիվը Ամպրոպի աստծուն և ամպրոպային երևույթներին կապելու հնդեվրոպական ավանդույթը պահպանել են մի շարք ժառանգ ժողովուրդներ: Հանրահայտ է հինգշաբթի օրը «Ամպրոպի աստծու օր» կոչելու ավանդույթը գերմանական, բալթյան, սլավոնական լեզուներում. հմնտ. գերմ. *Donnerstag*, անգլ. *Thursday*, լիտվ. *Perkūno diena*, պոլաբ. սլ. *Peräunedån* (Иванов, Топоров, 1974, 24–25): Շաբաթվա 5-րդ օրվան առնչվող ամպրոպային երևույթներից են գալիս քրիստոնեական Հայաստանում ուրբաթ օրվան վերագրվող մի շարք հավատալիքներ և այդ օրը դարբնի խոսելուն վերաբերող թաբուն: Երկաթն ու պողպատը դեռևս հեթանոսական Հայաստանում ձոնված են եղել Ամպրոպի աստծուն, և ոչ վաղ անցյալում մարդիկ դրանցով պատրաստված մատանիներ ու ապարանջաններ էին կրում: Դրանք առավել ազդու ներգործություն էին ունենում, երբ դարբինը պատրաստած էր լինում ուրբաթ օրը (ՀԲԲ, 1944, I, 279; III, 612): Դարբինի առասպելաբանական առնչությունը Ամպրոպի աստծու (հատկապես սրա մուրձի, որոտի և կայծակի) հետ հանրահայտ է (Иванов, Топоров, 1974, 162): Բայց մեր դարբինը պետք է արթնանար լուսաբացին և չարխափան արուրքը սկսեր պատրաստել՝ մետաղի վրա անխոս աշխատելով և այդպես իր գործն ավարտին հասցնելով (Աբեղյան, 1975, է, 76): Այս առթիվ Մ. Աբեղյանը գրում էր. «Այսպիսով, ուրբաթն համարվում է հմայական ազդեցության օր: Գուցե կարող ենք ասել, թե այս օրը հավանաբար նվիրված է եղել հին ամպրոպային աստծու՞ն: Դրանից է երևի, որ ուրբաթարուրքներն համարվում են ավելի ազդեցիկ, ինչպես և գերմանացիների մեջ կայծակի խորհրդանիշներն ավելի ազդեցիկ են հինգշաբթի և Դոնարին նվիրված տոնական օրերին» (Աբեղյան, 1975, 77): Անշուշտ, Մ. Աբեղյանի թե՛ կոահումը (թեկուզ հարցականով) և թե՛ զուգադրումը ճիշտ են:

Թե ինչու մեր հավատալիքներն ու դարբնի խոսելու տաբուն հինգ-  
 շաբթի օրվա փոխարեն հարմարեցրել են ուրբաթին, ավելի քան հասկա-  
 նալի է. Քրիստոնեությունն ընդունելով՝ բոլոր քրիստոնյա ժողովուրդնե-  
 րը փոխել էին շաբաթվա օրերի հերթականությունը՝ Քրիստոսի Հարու-  
 թյունը դնելով ոչ թե շաբաթվա 1-ին, այլ 7-րդ օրը: Դրանով 5-րդ օր դառ-  
 նում էր ուրբաթը, որովհետև շաբաթվա սկիզբը ոչ թե միաշաբթին (կիրա-  
 կին), այլ երկուշաբթին էր: Ի տարբերություն մյուս (եվրոպական) քրիս-  
 տոնյանների՝ հայերը տեղափոխել էին նաև 5-րդ օրվան առնչված հավա-  
 տալիքները և տաբուն, դրանք հարմարեցնելով շաբաթվա օրերի նոր  
 հաշվարկով 5-րդ դարձած ուրբաթ օրվան: Ցույի, մասնավորապես  
 ցլագլխի պաշտամունքը ունեցել են իրենց երկնային առարկայացումները  
 ևս: Դրանք Կենդանակերպի Ցուլ համաստեղությունն էր մանավանդ նրա  
**գլխամասի հինգ** պայծառ աստղերը (Աճառյան, 1979, IV, 376): Այս աստ-  
 ղային հնգյակի հովանու տակ են, հավանաբար ըմբռնվել հին Հայաստա-  
 նի պետական կառույցի այնպիսի գլխավոր հաստատություններ ինչպի-  
 սիք էին թագավորական իշխանության ու չորս բղեշխությունների 1+4  
 հանրագումարը, և Հայոց բանակի ստորաբաժանումների ամբողջությու-  
 նը՝ արքունի բանակի ու չորս «դռների»՝ 1+4 հանրագումարը (Адоиц., 1971,  
 251-252, 263-264)<sup>3</sup>: Այս տեսանկյունից պատահական չէ, որ համաստե-  
 ղությունը **Ցուլ** է կոչվում, իսկ նրա առաջին մեծության ամենապայծառ  
 աստղը՝ Aldebaran (հմնտ. արաբ. al-dabrān «ցուլ, եզ») (Աճառյան, IV, 376):

Արարատյան դաշտի Արաքս գետից հյուսիս գտնվող ուրարտա-  
 կան հնավայրերի պեղումները ցույց են տալիս, որ տեղացիներն ունեին  
 իրենց գլխավոր աստվածը ի դեմս ուրարտական արձանագրություննե-  
 րում հիշատակված Իվարշայի (<sup>D</sup>I-u-ar-ša-a) (Իսրայելյան, 1971, 77-79):  
 Ռուսա II-ը (մ.թ.ա. 685-645 թթ.) այստեղ էր հիմնադրել ուրարտական  
 Ամպրոպի աստված Թեյշեբայի պատվին **Թեյշեբաինի** կոչված բերդա-  
 քաղաքը (Կարմիր բլուր): Ըստ երևույթին, սա նախապես եղել է Իվարշա-  
 յի՝ որպես Ամպրոպի անձրևաբեր աստծու, պաշտամունքի կենտրոններից  
 մեկը: Դրա ապացույցը նրա անունն է: Հ.-ե. \*ǰers-/\*ǰrs- «անձրև, ցող»  
 նախաձևից ծագած այս դիցանվան գուգահեռներից են խեթ. varša  
 «անձրև, տեղատարափ», հին հնդկ. varsá- «անձրև», հուն. ἔρση «ցող, խո-

<sup>3</sup> Հմնտ. մ.թ.ա. 1115 թ. Ասորեստանի թագավոր Թիգլաթփալասար I-ի դեմ ելած, բայց պարտություն կրած mušk-երի (\*mosk-) աշխարհագրորդ գլխավորած **հինգ «թագավոր-  
 ները»** («Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա», 1981, էջ 16-17): Որ դրանք ցլա-  
 պաշտ են եղել ցույց է տալիս նրանց ցեղանունը՝ արմատակիցը հուն. Μόσχος «ցլիկ» և  
 հայ. **մոզի** «հորթ» բառերի («Древнегреческо-русский словарь», 1958, с. 1110; ՀԱԲ,  
 հատ., III, 1977, էջ 338):

նավություն» բառերը և փոյուզ. Λιτσερσας (<\*lit-*yers*-as) դիցանունը (Герознак, 1978, 150.): Առանց **ի-** նախաձայնի բառն առկա է հին հայկական **Վարշակ** (<վարշ-ակ) տեղանվան մեջ (Պետրոսյան, 1979, էջ 73): Դա Տատեոն (այժմ Դիադին) ավանի մոտ գտնվող ջերմուկների վայրի անունն էր (Երեմյան, 1963, 85): Ը-ե. \**yer*-/\**յբ*- արմատական ձևից են լինելու **վարար** «հորդ» և **վարար** «վավաշոտ» բառերը:

Ցող/անձրև/տեղատարափ հասկացությունները ցուլին առնչվելու առթիվ հիշենք, որ արու եղջերավորների մասին նախնադարում գոյություն ունեցող պատկերացումը հանգում էր նրանց «հոսեցնող» լինելուն (Աճառյան, 1971, I, 261): Ըստ այսմ, Իվարշան Արին բերդում (Էրեբունի) և Կարմիր բլուրում (Թեյշեբաինի), ամենայն հավանականությամբ, պաշտվել է նաև ցուլի կերպարանքով: Այս տեսանկյունից կարևորվում են Մ. Իսրայելյանի հետևյալ դիտողությունները: 1. Կարմիր բլուրից հայտնաբերված բրոնզե գլանաձև պատվանդանի արձանագրությունում ասվում է. «Խալդիին՝ տիրոջն իր այս նվիրական **եղջյուր**-ուղերձը որպես հատուցում, Արգիշթին Մինուայան պատրաստեց, երբ Էրեբունին կառուցեց» (Իսրայելյան, 1971, 70): 2. «Արին-Բերդում, «սուսիի» առջև ձգվող հրապարակում մույթերից մեկի մոտ, ուր զոհասեղանը պիտի եղած լիներ, գտնվեց բրոնզե մի փոքրիկ **եզան** արձանիկ (2,5x1,5 սմ): Արձանիկը, սակայն, զուրկ է ուրարտական արվեստին հատուկ մանրուքների մշակումից, թեև չափով համապատասխանում է նրան» (Իսրայելյան, 1971, 69-70): 3. «Արձանիկը, ինչպես երևում է ութերի մշակումից, ունեցել է պատվանդան» (Իսրայելյան, 1971, 70): Ավելացնենք, դա բազինն է եղել, որի հետ միասին Իվարշայի խորհրդանիշ ցլիկը հիշեցնում է մարմարե պատկերաքանդակի ցլագլխով հայկական բազինը, մանավանդ որ ցլիկը հայտնաբերվել է նախկին զոհասեղանի տեղում: Վերհիշենք, որ ուրարտական դարաշրջանում մարտական ցուլը Թեյշեբայի խորհրդանիշն էր:

### 3. Ցուլն ու ցլագլուխը՝ Արևի աստծու խորհրդանիշ

Մովսես Խորենացու ավանդած «Վահագնի երգ»-ը արևաբնույթ աստվածության ծննդյանը ձոնված կրոնական հիմն է՝ օրհներգ: Այն բաղկացած է ինը տողից (9=3·3), որից առաջին տողերն անմիջապես բացահայտում են նրա հասցեատեր աստվածության եռակի ծնունդ լինելու հանգամանքը. «Երկնէր **երկին**, երկնէր **երկիր**, երկնէր և **ծովն** ծիրանի» (Խորենացի, 1981, Ա, լա): Արևի, արեգակնային լույսի և «3» թվի

փոխադարձ առասպելաբանական կապի մասին է խոսում արցախահայերի (Վարանդա) հետևյալ հավատալիքը. «Երկնքում կա երեք թռչուն: Երբ նրանցից առաջինը ձայն է հանում, բացվում է առավոտը, երկրորդի ձայն հանելիս՝ դառնում է կեսօր, իսկ երբ երրորդ թռչունն է ձայնում, մուլը պատում է աշխարհը» (Լալայան, 1988, II, 175): Այստեղ արտացոլված է նաև երեք թռչունների առասպելաբանական կապը արևի երկնականարային երեք հենակետային դիրքերի հետ՝ առավոտյան, կեսօրին և երեկոյան: Բուդիսի մասնավոր հավաքածուի (Ժնև) ուրարտական ընծայական թիթեղին Արևի աստվածը պատկերված է ձեռքին երեք փետուրներ, իսկ իր բազմած գահը դրված է ցուլ (եզ) պատկերող պատվանդանի վրա (Պետրոսյան, 2008, 35): Երեք փետուրները խորհրդանիշ-համարժեքներն են հիշյալ երեք թռչունների, իսկ ցուլը (եզը) հենարանն է Արևի աստծու գահի, լայնաբար՝ նաև երկրագնդի: Բնականաբար, սա մարտնչող ցուլ չէ. հավանաբար եզ է:

Մարտական ցուլը ևս կարող էր Արևի աստծո խորհրդանիշ դիտվել: Այդպիսին է նա պատկերված Վանի նահանգի Անձավ գյուղի ավերակ (նույնանուն՝ Անզաֆ) բերդից պեղված ուրարտական բրոնզե վահանի բեկորին, որովհետև աղեղնավոր և թևավոր շրջանակ կրող Արևի աստվածը պատկերված է նրա վրա կանգնած՝ թշամու դեմ արշավելիս (Belli, 2000, 37-41): Արևի աստվածը շարքում **երրորդն** է. հմնտ. ուրարտական պաշտոնական դիցարանում Շիվինիի գբաղեցրած հաստատուն **երրորդ** տեղը: «3» թիվը արևին և Արևի աստծուն առնչվելու մասին են խոսում «Վահագնի երգ»-ի նաև շղարշագրերը (անագրամաները): Դրանում երիցս հանդիպում ենք **արևը** հիշեցնող **էրև** հնչյունակապակցությամբ: Բանն այն է, որ տեքստում *և* շաղկապին երեք անգամ նախորդող բայական **-էր** վերջավորությունը (երկն**էր**, ուն**էր**, ելան**էր**) նրա հետ միասին տալիս է **էրև**: Երբ ի նկատի ենք առնում հիմնի հիմքում դրված եռակիության գաղափարը՝ որպես շղարշագրեր արտահայտված **եր-** և **-էր** հնչյունակապակցությունների բազմակի կրկնությամբ (իսկ դրանք հիշեցնում են **երեք** և **երիցս** բառերի արմատները) (Պետրոսյան, 1981, 77-79): Դրանից պարզ է դառնում, թե ինչու **էրև** կամ **արև** բառը հանդես է գալիս երիցս: Այսպիսով, Վահագնի նախատիպ Արեգ (Արև) աստվածությունը, որի անունն էր կրում հայոց օրանուններից առաջինը, լինելու էր նույն այն աստվածը, որը խեթա-հայասական դաշնագրում հիշատակված է «Բարի Արև» անվամբ և հայասական դիցարանում **3-րդն** էր (Պետրոսյան, 2006, 145-150) :

Ցլագլխի պաշտամունքը տարածված էր նաև հնագույն Հունաստանում: Միկենյան արվեստի գործերում՝ կան ստորին մասով ցլագլուխ ձևացնող պտյակներ, կան նաև եղջյուրների միջև արևը խորհրդանշող ոսկեղեն վարդյակով ցլագլուխներ (Ozanne, 1990, 80): Մրանց հետ զուգահեռվում է եգիպտական Ապիս եզր՝ եղջյուրների միջև արևի ոսկե սկավառակ (գունդ) ունեցող քանդակներով:

Եթե Արարատյան դաշտի ձախափնյակում կար անպրոպային-անձրևաբեր Իվարշայի պաշտամունքը, ուրեմն, կարող էր լինել նաև նրա «երկվորյակը» համարված արևաբնույթ աստծու պաշտամունքը: Մենք այդպիսին համարում ենք **Տիւր/Տիր** կոչված աստծուն: Հելլենիզմի դարաշրջանի Մեծ Հայքում, ինչպես Գ. Սարգսյանն էր նշում՝ «Ապոլլոն-Հելիոսը նույնացվում է ոչ թե Միհր աստծու հետ, ինչպես Կոննագենետում էր, այլ Տիր աստծու, որը մեծ համարում ուներ հայերի մեջ. հմնտ. **Տիրան, Տրդաստ, Տիրիթ** թեոֆոր (դիցանվանակիր) անունները» (Սարգսյան, 1966, 44): Հայոց **Տիր/Տիւր** աստվածը նախապես պաշտվել է իր նախատիպ՝ հնդեվրոպական բոլոր ցեղերի պայծառ երկնքի գլխավոր աստծուն բնորոշ գծերով: Դրա վկան հենց դիցանունն է՝ իր երկու տարբերակով ծագած հ.-ե. \*deu-/\*dei- «փայլել, շողալ, երևալ» նախաձևից: **Տիւր<\*տիւ-ր** և **Տիր<\*տի-ր**՝ երկունս էլ **-ր** աճականով (Աղայան, 1974, 148): Արմատական \*deu-ից ունենք **տիւ** «օրվա լուսավոր մասը, ցերեկ» և ազգակից լեզուներից հին հնդկ. *dēva* «աստված» բառը, հուն. գերագույն աստծու *Διός/Ζεός* անունը, լատին. *Deus* «աստված» բառը և այլն (Աձառյան, 1979, IV, 410) :

Ըստ Է. Աղայանի՝ հայկական դիցանվան «ցեղակից ձևերը ցույց են տալիս, որ հայերի մոտ էլ Տիւրը (Տիրը) նախապես եղել է ընդհանրապես աստված, բայց հետագայում ավելի մեծ աստվածների, հատկապես Հայկի, ապա և Արամազդի պաշտամունքի հետևանքով դարձել է գիտության ու ճարտարության աստված» (Աղայան, 1974, 148)<sup>4</sup>: **Տիր** և **Տիւր** կոչված այս աստծու մեհյանը գտնվում էր Վաղարշապատից Արտաշատ տանող

<sup>4</sup> Արամազդի կողմից և Տիւր/Տիր աստծու պաշտամունքի ետնդումը կարող էր տեղի ունեցած լինել մ.թ.ա. V-IV դդ. սահմանագլխից սկսած, երբ Աթենյան Արտաքսերքսես II-ի կողմից պետական պաշտամունքում առաջնություն տրվեց Ահուրամազդա-Անահիտա-Միթրա եռյակին (**Փբայ**, 1972, с. 166), իսկ Հայաստանում Տիւր/Տիր բնիկ աստվածը նույնացվեց պարսկական Տիր (<իրան. *Tištaya*) Աստծու հետ: Ի դեպ, անկախ իրենց տրված անունների ծագումնաբանությունից՝ այդպիսի գլխավոր եռյակ մեր նախնիներն ունեին դրանից դեռևս 1000 տարի առաջ և դրանից ևս 700 տարի հետո: Հիշենք խեթա-հայաստական հաշտության պայմանագրում (տեքստը խեթերեն է) հիշատակված Ս.GUR-INANNA-Iziišanu(//«Բարի արև») առաջնային եռյակը և Արամազդ-Անահիտ-Վահագն (ըստ Տրդատ III-ի հրովարտակի) նույնպես առաջնային եռյակը (**Պետրոսյան**, 1996, 420-439):

ճանապարհի վրա՝ Երազամուն վայրում: Տրդատ III թագավորի հակահեթանոսական գործունեությունը նկարագրելիս Ագաթանգեղոսը տալիս է Աստծո և նրա մեհյանի բնութագրությունը: Կարդում ենք. «Ապա ինքն իսկ թագաւորն խաղայր գնայր ամենայն զօրօքն հանդերձ ի Վաղարշապատ քաղաքէ...նախ դիպեալ ճանապարհի երազացոյց երազահան պաշտաման Տրի դից՝ դայրի գիտութեան քրմաց, անուանեալ դիւան գրչի Ռրմզդի, ուսման ճարտարութեան մեհեան. նախ ի նա ձեռն արկեալ՝ քակեալ, այրեալ, աւերեալ քանդեցին» (Ագաթանգեղոս, 1983, ՃԸ, 778):

Եթե Տիր/Տիր աստծուն՝ **դայիր**, իսկ նրա տաճարը **դիւան** են կոչել, ապա տաճարում պահված տարբեր դայրությունների նմուշները այբբենական-մատենագրական բնույթի են եղել: Ըստ այդմ, հայկականը կարող էր լինել մարմարե պատկերաքանդակի երկտող արձանագրության մատենագրական տեսակը: Ուշագրավ է, որ մաշտոցյան այբուբենի **Տ** տառի անունը՝ **տիւն**-ը իր **տիւ** «լույս» արմատով նույնական է **Տիր** դիցանվան արմատի հետ՝ **Տիր** և **տիւն**: Սրանք հնագույն **-ր/-ն** հնչյունական համարժեքության օրինակ են բացահայտում այնպես, ինչպես է նաև **հուր/հուն** (>հնոց) արմատների և **փ** տառի «փիր/փին» անունների (Աճառյան, 1977, III, 106, 125; Պողոսյան, 1991, 22-23) դեպքում: Ի դեպ, **Տ** տառին հաջորդ **ր**-ի անվան «րէ» հնչյունների միացումը տալիս է **Տրէ**, որն, ըստ է. Աղայանի **Տիր/Տիր** դիցանվան հնագույն սեռական հոլովածն է (Աղայան, 1974, 130): Սա շղարշագրության (անագրամայի) արդյունք չէ<sup>5</sup>:

Մարմարե պատկերաքանդակին առկա երկտող անընթեռնելի արձանագրությունը Ա. Աբրահամյանը համարում էր կեղծիք, ելակետ ունենալով մաշտոցյան այբուբենի տառերը: Նա գրում էր. «...հնագրական մեր ուսումնասիր ություններից պարզվեց, որ այն կեղծիք է. կեղծարարը, ինչպես երևում է, չի իմացել, որ հին հայկական գրերը ուղղագիծ ձև չունեն, և այդ էլ մատնում է իրեն» (Աբրահամյան, 1973, 22-23)<sup>5</sup>: Բայց գուցե այդ գրերը, ինչպես Գ. Լևոնյանն էր նախ ենթադրել, «դանիելյան» գրերն են (Լևոնյան, 1941, 70), սրանց՝ մարմարին (քարին) փորագրելու համար հարմարեցված տեսակը: Հունական տառերի օրինակը կար, մանավանդ որ դրանք հիշեցնում են Երուսաղեմի հայկական խճանկարին ուղեկցող և Արուճի ու Մաստարայի հին եկեղեցիների արձանագրությունների գրերի ձևը (Պետրոսյան, 2020, 28-29; Սարգսյան, 1966, 39-40, 62-63, 239-240):

<sup>5</sup> Այստեղ գետեղված պատկերաքանդակի լուսանկարը սխալմամբ շրջերեսից է դիտված:

#### 4. Պատկերաքանդակի այլ խորհրդանիշների մասին

Արևային և Ամպրոպային աստվածների խորհրդանիշները համատեղ պատկերել հայոց նախնիները սկսել էին դեռևս մ.թ.ա.III հազարամյակի կեսերին, երբ պատմական Հայկը դարձել էր ցեղապետ-արքա, իսկ նրա Հայկ աստվածն ըմբռնվում էր որպես գերագույն աստված: Այդ ժամանակաշրջանի ժայռապատկերներից մեկում Հայկ աստվածը պատկերված է Մայր դիցուհու հետ, մի (աջ) ձեռքին արևը խորհրդանշող խաչ, իսկ մյուս (ձախ) ձեռքին՝ ամպրոպը խորհրդանշող բուստերանգ (Պետրոսյան, 2020, 28-29, նկ. 3ա)<sup>6</sup>:

Ինչպես վերևում նշվեց «վիշապ» ձկնակերպ կոթողների մեջ կան այնպիսիները, որոնք ցլագլխից աջ և ձախ ունեն Արուսյակի երկու երևումները խորհրդանշող մեկական թռչուններ (Աբեղյան, 1975, է, 142-173): Դրանց հետ նույնական են Հայոց (Արտաշիսյանների) թագի գույգ թռչունները: Մ.թ.ա. 35 թ. Հռոմում, Հայաստանի «նվաճման» առթիվ թողարկված արծաթե դրամի Հայոց թագին, արեգակնային լույսի խորհրդանշանի շրջապատում գույգ թռչունների փոխարեն գույգ աստղեր են (Մուշեղյան, 1983, 88-89): Դրանք ևս խորհրդանշում են Լուսաբերն ու Գիշերավարը: Ցլագլխի կից, նրա և ջահերի միջև դիզված քուլաները խորհրդանշում են ամպերը, իսկ բագինի երկու կողմից իջնող ալիքաձև (ձախից) և ուղղագիծ (աջից) գծերով պատկերված են հանդարտ և տեղատարափ անձրևները:

Ցլագլխի բերանից բխում է ջրի առատ շիթ, որը ամենևին չի կարելի համարել «իր կաշին լիզող լեզու»: Բագինին փովածը կաշի չէ, մորթի է՝ գեղմ: Ձեռքին փաթաթած մորթին գազանների դեմ մարտնչող մեր նախնու պաշտպանության հանրահայտ միջոցն էր՝ պատկերված բազմաթիվ ժայռապատկերներում (Կարախանյան, Սաֆյան, 1970, աղ.11, նկ. 4, աղ. 103, նկ. 1, աղ. 154, նկ. 2): Դրա հիշատակն է պահել Ամալթեա այծի մորթուց պատրաստված Զևսի **այգիս** վահանը: Իսկ ցուլի առթիվ հիշենք նաև Եվրոպային առևանգելու դրվագում ցուլի վերածված Զևսի ոսկեփայլ, լուսափայլ մորթին:<sup>7</sup>

<sup>6</sup> Հելլենիստական դարաշրջանի Հայաստանում այդպիսին էր ընկալվում Զևս-Արամագորդ, որին նույնացնում էին Սելևկյան արքաների պաշտած Օլիմպիական Զևսի հետ. Հմմտ. Անիի Արամագրի տաճարի քուրմ և «Մեհենական պատմության» հեղինակ անձի **Ռդունյա** անունը (<հուն. 'Օլոմպիոս), որի երկը Մովսես Խորենացու աղբյուրներից մեկն էր (**խորենացի**, 1981, Բ, խր.) (**Սարգսյան**, 1966, էջ 39-40, 62-63, 239-240):

<sup>7</sup> Տե՛ս, Լուսանկար մ.թ.ա. IV դ. ապուլյան արտադրանք անոթից (**Comte**, 2005, p. 17): Տե՛ս նաև **Կուն**, 1956, էջ 167-168 և նկարը: Հմմտ. Գրիգոր Նարեկացու «Յարութեան» տաղի

Պատկերաքանդակի մանուկներից երեք տղաների թիվը կապի մեջ է դրված Հայկն/Օրիոնի գոտու ծ, Ե, Յ աստղերի (կոչված նաև **երեք թագավորներ, երեք մոզեր**) (Ալիշան, 2002, 67; Թումանյան, 1968, 90), իսկ երեք աղջիկներինը՝ առաջին մեծության  $\alpha$ ,  $\beta$ ,  $\gamma$  աստղերի եռյակի հետ: Քանի որ  $\delta$ ,  $\epsilon$ ,  $\zeta$  աստղերի եռյակը «թագավորական» էր, թեպետև կազմված էր երկրորդ մեծության աստղերից, ապա համապատասխանելու էր Հայկի երեք աստվածացված որդիներ Արամանյակին, Խոռին և Մանավազին (Խորենացի, 1981, Ա, Ժբ; Պետրոսյան, 2006, 364–370), իսկ  $\alpha$ ,  $\beta$ ,  $\gamma$  աստղերի եռյակն էլ համապատասխանելու էր նրա աստվածացված երեք դուստրերին: Դա հաստատվում է այս գրույցի միջոցով. «Հայկ նահապետն ունեցել է երեք որդի և երեք աղջիկ, որոնք աստղեր են դարձել: Երբ հորիզոնի վրա բարձրանում են Կշիռ կոչված աստղերը, ասում են «Խեքեր (=հեքեր, Հայքեր) ելան», երբ նրանք թեքվում են դեպի արևմուտք, ասում են «Խեքեր մտան» (Դանալանյան, 1969, 10)<sup>8</sup>:

Մարմարե պատկերաքանդակի բազինը ստորին մասում երկու աստիճան ունի՝ վրան դրված չորս կճուճներով: Դրանցից աջակողմյան երկուսը երեխաների հոր և իր որդիների, իսկ ձախակողմյան երկուսը՝ նրա տիկնոջ ու դուստրերի կողմից կատարված նվիրաբերումներ են: Դրանք պարունակելու էին հայոց մեջ ավանդական բարիքներ համարված յուղն ու մեղրը և եղել են առատություն՝ «լիութին պարարտութեան», խորհրդանշող նվիրատվություններ (Ագաթանգեղոս, 1983, ԺԲ, 127)<sup>9</sup>: Կարծում ենք, որ նույնպիսի խորհուրդ են ունեցել նաև ցլազլիսի եղջյուրները՝ նման հունական առասպելաբանության Ամալթեա այծի եղջյուրին: Երբ մանուկ Ջևսի ստնտու Ամալթեայի եղջյուրը կոտրվել էր, մանուկ աստվածն այն իր ձեռքում պահելով աղոթել էր, որից հետո

լծկան եզների նկարագրությունը. «Եթե եզինքն են *սաթ ու սպիտակ*, ծաղկախայտուցք, արագաքայլք, ընթացականք,/ եղջիւրն ամէն խաչանման, /և մագն ամէն հոյլ մարգարիտ» («Հայոց հին և միջնադարյան բանաստեղծության քրեստոմատիա», 1979, էջ 41):

<sup>8</sup> Ուրարտական դրոշներին հաճախ է պատկերվել Հայկն համաստեղության և Հայկ աստծու խորհրդանշանը՝ միմյանց հետ խաչվող երկու երկար թեք գծերը: Ուշագրավ է, որ դրանց վրա երբեմն բացակայում է Հայկի երեք որդիներին խորհրդանշող (և համաստեղության աստղերի եռյակին համապատասխանող, երկու երկար գծերի հատման կետով անցնող) ուղղաձիգ կարճ գիծը, մանավանդ, երբ դրոշները կրողները դիցուհիներ են: Սակայն այն առկա է, երբ դրոշակակիրները աստվածներ (տղամարդիկ) են (*Հնայական*, 1990):

<sup>9</sup> «Սասնա ծռեր» դյուցազնավեպում նախ օտարությունում հայտնված նորածին Դավիթը ապա նրա կառուցած վանքի երկու պահապան փահլևանները սնվում են Սասնա յուղ ու մեղրով (կարագ-մեղրով): («Սասնա ծռեր ժողովրդական վեպ», 1936, էջ 61, 166, 254, 263, 334, 386, 760; 1951, էջ 568):

կոտրված եղջյուրը դարձել էր մի կախարդական իր: Այն իր ձեռքն առնողը նրանից ստանում էր իր ցանկացած սնունդը՝ ցանկացած քանակությամբ: Այնուհետև նրան տրվում էր **Առատության եղջյուր** անունը (լատին. *cornu copiae*) (Парандовский, 1971, 48–49; Becher, 1985, 31):

Եղջյուրի պաշտամունքից եկող այսպիսի հավատալիքի երբեմնի գոյության վերհուշն է պահպանել հայ ժողովրդական «Վարդիկ եզր» հեքիաթը (ՀԺՀ, 1977, VIII, 72–77): Այստեղ կենտրոնական գործող անձը մորից որբ մնացած, բայց եզան սիրելի աղջիկն է: Վարդիկ եզր նրան ասում է. «**Իմ մի պողը եղ ա, մինը մեղր ա.** ուտիս օրը եղը ծծե, պաս օրը մեղրը ծծե» (ՀԺՀ, 1977, VIII, 72): Այս աղջիկը կախարդ պառավի խորհրդով խմում է սպիտակ աղբյուրի ջուրը և դառնում է ոսկերեսիկ-ոսկեմազիկ, իսկ իր խորթ, անբան ու ծույլ քույրը, խմելով սև աղբյուրի ջուրը, դառնում է սևերես: Այս քույրերը հեքիաթային հետնորդներն են Լուսաբերի ու Գիշերավարի անձնավորում (երբեմն՝ հակոտնյա) աստվածությունների: Մնուցիչ Վարդիկ եզր նաև իմաստուն է, մեռնող-հառնող և այլակերպվող: Գիտենալով, որ իրեն մորթելու են, իր հովանավորյալին պատվիրում է, որ իր ոսկորները նա հավաքի և մի թաքուն տեղ պահի (ՀԺՀ, 1977, VIII, 75–76): Անուսնության նախօրյակին աղջիկը մտնում է գոմը և տեսնում է մի հրաշք ձի: «Վարդիկ եզան օսկոռնին էր նրա ձին» (ՀԺՀ, 1977, VIII, 77), երբ հեծնում է նրան «ձին գնում ա, ոնց որ աստղը ծոր տալիս ըլի. խալխը թմաշ ա անում (դիտում է). զարմանում են, ասում են. –Երկնքիցն ա վեր էկել, հրիշտա՛կ ա» (ՀԺՀ, 1977, VIII, 76): Եզան փոխակերպումը ձիու վկայում է այս կերպարի երկբնույթ՝ միաժամանակ ամպրոպային և արևային, լինելու մասին: Հաշվի առնենք, որ ձին, մանավանդ երբ թևավոր է պատկերվել, խորհրդանշում էր արևաբնույթ աստվածներին (Իսրայելյան, 1971, 65, 73)<sup>10</sup>: Ուրաբատական արվեստի գործերում կարելի է տեսնել նման ձիերի:

Այս հեքիաթի եզան **Վարդիկ** անունը փառաբանական ձևն է մատաղացու եզան **Վարդևան** անվան: Այդպես էին հայերը կոչում «**Սև ու սպիտակ**» պիսակներով եզը, որ ընտրում են Վարդևորի տոնին մատաղ անելու, ուստի առանց աշխատեցնելու պահում են մինչև այդ օրը, որպեսզի գիրանա» (Մալխասյանց, 1945, IV, 310): Հայկական մարմարե պատկերաքանդակի՝ գերագույն աստծու խորհրդանիշ ցլագլուխը նաև

<sup>10</sup>Ըստ երևույթին, *Shir/Shir* աստծուն ևս պատկերացրել են թևավոր ձիեր ունեցող (թերևս մարտակառքի զույգ ձիերի օրինակով): Նրա անվանակիր *Shirvan* թագավորի ձիերի վերաբերյալ պատմել են, թե նրան «ձիուց երկուց լեալ՝ թեթև առավել քան գՊիզասու, երագութեամբ անբաւ զորս ոչ երկրակոխս, այլ օդագնացս համարեին» (**Խորենացի**, 1981, Բ, կբ):

զոհ է՝ հեթանոսական նախորդը քրիստոնեական Վարդավառի տոնին մատաղվող Վարդևան եզան: Բերված անունների \*վարդ բաղադրիչը ընդհանուր ոչինչ չունի վարդ ծաղկի անվան հետ: Ինչպես ժամանակին **Վարդավառ** կոչված ջրատոնի առթիվ Գր. Ղափանցյանն էր ցույց տվել, **վարդ**-ը հնդեվրոպական ծագումով \*վադր «ջուր» բառի դրափոխված ձևն (Ղափանցյան, 1961, 151-152; Капанцян, 1956, 287-288) է, իսկ **վարդ-եւան** բառի երկրորդ մասի համար հմնտ. **իջ-եւան, հար-եւան, օթ-եւան:**

Բերված առասպելաբանական և հարակից նյութը՝ զուգահեռ հնդեվրոպական նյութի համեմատություններով և դրանց մանրակրկիտ վերլուծությունների միջոցով, գալիս է մերժելու հայկական մարմարե պատկերաքանդակը կեղծիք լինելու տեսակետը: **Հետազոտության ընթացքում բացահայտված պատկերաքանդակի իմաստաբանական հենքը ներկայացնելով կապակցված կուռ մի կառույց, թելադրում է իրենից բխող միակ եզրակացությունը. պատկերաքանդակը բնօրինակ է: Չի բացառվում, որ ապօրինի պեղումների միջոցով այն հայտնաբերված լիներ Արարատյան դաշտի հնավայրերից մեկում, թերևս Արմավիրի կամ Երվանդաշատի ավերակներում:**

5. Պատկերաքանդակին պատկերված պատմական դեմքերի և արտացոլված դեպքերի մասին

Մարմարե պատկերաքանդակի մանուկների թիվը՝ 3+3=6, խոսում է ոչ միայն նրանց Հայկի պաշտամունքին, այլև պատմական Հայկից սերած Հայկազանց/Երվանդունի (Խոբրենացի, 1981, Բ, կէ) տոհմին առնչվելու մասին: Գ. Լևոնյանի կարծիքով, մարմարե պատկերաքանդակի հնությունը կարող է հասնել «մինչև պարթևական դարաշրջան» (Լևոնյան, 1941, 70), իսկ Ա. Մովսիսյանի կարծիքով, այն կարող է ստեղծված լինել աքեմենյան դարաշրջանում՝ մ.թ.ա. VI-IV դարերում, որովհետև նրանում ներկայացված տղամարդու գլխանոցը նման է Հայաստանի աքեմենյան սատրապներ Օրոնտաս/Երվանդի և Տիրիբազի խույրերին (Մովսիսյան, 2005, 96): Եթե պատկերաքանդակի տղամարդու պատկերը սատրապական կամ սրան նման գլխանոց է կրում, ուրեմն, նա թագավոր չէ: Դրան հակառակ, նրա կնոջ կրած թագը նման է Հայոց արքայական թագի վերնամասին՝ շրջանակին դրված, վերևում սրացող եռանկյունիներով: Իրենց վերնամասով այդպիսին էին Կոմագենեի Երվանդունի և Մեծ Հայքի Արտաշիսյան արքաների թագերը

(ՀԺՊ, I, 453-454; Фрай, 1972, рис. 94): **Ուրեան կինը արքայական ծագում ունի, իսկ ամուսինը՝ ոչ:**

Հելլենիստական դարաշրջանի Մերձավոր Արևելքում պահպանվում էր հազարամյակներ առաջ ստեղծված «սրբազան» ամուսնության ավանդույթը: Հայտնի օրինակներից մեկը արձանագրված է մ.թ.ա. XXII դարի երկրորդ կեսին Շուսերի ամենահարուստ քաղաք Լագաշի պատենսի (կառավարիչ) Գուդեայի ծննդի առթիվ: Նրա քրոնիկի մայրը համարվում էր երկրային դրսևորումը Բաբա դիցուհու, իսկ անհայտ հայրը (հավանաբար, նույն տաճարի քուրմ)՝ դիցուհու ամուսին Նինգիրսուի: Ըստ այսմ, Գուդեան ընկալվում էր զավակը ոչ թե մարդկային այլ աստվածային ծնողների, իսկ այդպիսի ծնունդները ավելի պատվաբեր էին համարվում (Дьяконов, 1989, 79-80): Նույնպիսի «սրբազան» ամուսնության հետևանք էր դիտվելու նաև Հայոց թագավոր Երվանդ Վերջինի (մ.թ.ա.222-201 թթ.) ծնունդը: Ըստ Մովսես Խորենացու բերած գրույցի, «Կին ոմն յազգէ Արշակունեաց, անձամբ հարստի և խոշորագեղ, գոր ոչ որ դիմագրաւեաց առնուլ կնութեան, ծնանի երկուս մանկունսս յանկարգ խառնակութենէ՝ որպէս Պասիփայէ զՄինտոտվրոս: Եւ ի զարգանալ մանկանցն՝ կոչեն անուանս Երուանդ և Երուագ» (Խորենացի, 1981, Բ, 1է): Մանուկների մոր նկարագրությունը հիշեցնում է նախնադարյան Մայր դիցուհուն (Սարգարյան, 1967, 200), որին էլ «սրբազան» ամուսնության ծեսում ներկայացրել է նրանց ապագա մայրը, իսկ նրանց ապագա հայրը լինելու էր քրմապետ՝ հին շամաններին ևս վերագրվող այլակերպվելու (ցուլ կամ մարդացուլ դառնալու) հատկությամբ: Դրա մասին է խոսում մանուկների ծննդի առնչությամբ Մինտոտվրոսի (Կուն, 1979; Becher, 1985, 359) խորենացիական հիշատակումը: Տեղին վերհիշենք նաև հունական Ջևսի ցլակերպությունը փյունիկյան արքայադուստր Եվրոպային առևանգելու առասպելում (Կուն, 1979, 167-169; Becher, 1985, 165-166): **Մարմարե պատկերաքանդակը, մեր կարծիքով, փորագրել տված Երվանդ Վերջինը, հավանաբար ցանկացել է ի ցույց դնել իր ծնողների արքայական-աստվածային ծագումը և կովան ստեղծել իր թագավորական անձի՝ ծնողներով և զավակներով հանդերձ, աստվածացման համար:**

Անանուն պատմիչի (Մերետս) բերած Հայոց արքայացանկում Երվանդ Վերջինը համարվում է նախորդ թագավոր Արշակի որդին: Այս Արշակը հայտնի է նաև «Քարթլիս ցխովրեբային» (Պետրոսյան, 2010, 42-43): Նրան էին դիմել վրաց մեծամեծները որպեսզի իրենց թագավոր կարգի իր՝ նույնպես **Արշակ** կոչված, որդուն (Պետրոսյան, 2010,

42-43): Հայոց Արշակ թագավորը **Արշամ** (Արսամես, Արսաբես) անունով հայտնի էր նաև հույն մատենագիրներին: Անանուն պատմիչը այս Արշակ/Արշամին համարելով Երվանդի հայրը մինևույն ժամանակ Երվանդին համարում է իրեն հաջորդած Արտաշեսի պատմական (Արտաշես I-ի) եղբայրը: Նրա արքայացանկում կարդում ենք. «Արշակ որդի Արշաուրի ամս ԼԷ: Ապա Երուանդ որդի Արշակայ՝ ամս ԻԱ: Ապա Արտաշես եղբայր նորին՝ ամս ԾԲ» (Սեբեոս, 1939, 10-11): Վերջին դեպքում կարող էր նկատի առնված լինել նրանց ազգականներ լինելու հանգամանքը, իսկ Արշակի հանդես գալը որպես Երվանդի հայր, այլ բացատրություն ունի: Թագավոր դարձած Երվանդ Վերջինը չէր կարող արքայադուստր մոր անունը Հայոց արքայացանկ մուծել, ուստի փոխարենը դրել է մայրական գծով իր թագավոր պապի **Արշակ** անունը, որովհետև Մերձավոր Արևելքի երկրներում կանանց ազգաբանության մեջ չէին մտնում: Օրինակ, Հիսուսի մայր Մարիամին «Աստվածաշնչի» ազգաբանության մեջ փոխարինել է նրա ամուսին Հովսեփը, որն իրականում Հիսուս Քրիստոսի հայրը չէր (Թովմա Արծրունի, 1985, 16):

Այսպիսի մոտեցումների հետևանքով, գուցե նաև **Արշակ** անվան պատճառով, մեր հին պատմիչները Երվանդ Վերջինին և իր մորական պապին դասել են հայ Արշակունի արքաների շարքը: **Արշակ** անունը պարթևները չեն բերել Հայաստան: Մինչև գահ բարձրանալը **Արշակ** էր կոչվում Աքեմենյան արքայից արքա Արտաքսերքես II-ը, որի Ռոդոգունե դուստրը Հայոց սատրապ Երվանդունի Օրոնտաս/Երվանդի կինն (Անաբասիս, 1970, 47) էր: Սրանց որդիները՝ մայրական գծով Արտաքսերքես II/Արշակի թոռները կարող էին կրել նաև իրենց այս պապի ինչպես **Արտաշես** (հին պարս. Artaxšaça) գահանունը, որն հետագայում գործածական էր Արտաշես I-ի և նրա սերունդների կողմից, այնպես էլ **Արշակ** անձնանունը (Plutarch; Дандамаев, 1985, 206-207, 275; Պետրոսյան, 2009, 25-28): **Արշակ**-ն համարում են **Արշամ** կամ **արշ** արմատով կազմված մեկ այլ անձնանվան փոքրացուցիչ-փաղաքշական տարբերակը<sup>11</sup>: Այս առթիվ ուշագրավ են **Արշամ/Արշակ** անունով (հուն. ΑΡΣΑΜΟΥ/ΑΡΣΑΚΟΥ) հայ արքաների դրամները: Հայտնի են դրանցից երեքը: Դրամագետ Զ. Պտուկյանը դրանք վերագրում է Ծովք-Կոմագենեի Արշամ անունով երկու թագավորներին (Bedukian, 1983, 71-87):

<sup>11</sup> Անվան արմատն առկա է իրանական և մյուս հնդեվրոպական լեզուներում «այր, տղամարդ» և «ցուլ, արու ոչխար, արջ» նշանակող բառերում (**Brandenstein**, 1964, S. 106), իսկ Arš-ak անվան –ak փաղաքշական-փոքրացուցիչ վերջածանցի համար հմմտ. Spitama անվան Spitak ձևը՝ «փոքրիկ Սպիտամա» նշանակությամբ (սա Ջրաղաշտ մարգարեի անձնանունն էր) (**Herzfeld**, 1947, p. 46-66).

Արշամ թագավորի անունով մեզ հասած դրամների տարբերությունների վերաբերյալ Խ. Մուշեղյանը գրում է. «Ըստ կերտվածքի արքայական դիմաքանդակների տարբերությունները՝ որպես անհատականությունների պատկերներ, վերոհիշյալ Արշամներին վերագրված պղնձե դրամների վրա, լրացնում են այդ նույն օրինակների հակառակ կողմերին դրոշմված սիմվոլների օգնությամբ» (Մուշեղյան, 1985, 210): Թեև Զ. Պտուկյանի հետևությամբ Խ. Մուշեղյանը ևս նրանց երկուսին էլ համարում է Ծոփքի թագավորներ՝ գահակալած մոտ 240-ական և 230-ական թվականներին, այսուհանդերձ, շեշտում է, որ նրանց դրամները տիպային առումով հստակ տարբերվում են միմյանցից. տարբեր են թե՛ արքայական դիմապատկերները, թե՛ թագերի ձևը, թե՛ դրամների հակառակ երեսին պատկերված խորհրդանշանները (Մուշեղյան, 1985, 209): Այսպիսի ակնառու տարբերությունները խոսում են այդ դրամները թողարկած թագավորների տարբեր պետությունների ներկայացուցիչներ լինելու մասին: Կարծում ենք, որ դրանք եղել են Մեծ Հայքի Արշակ/Արշամ և Ծոփք-Կոմագենեի Արշամ թագավորները (Պետրոսյան Ս., Պետրոսյան Լ., 2006, 198-201; Պետրոսյան Լ., 2009, 108-112): Մեծ Հայքի թագավոր Արշակ/Արշամը չէր կարող նույն տոհմին պատկանած կնոջ՝ Երվանդ Վերջինի մոր ամուսինը լինել, բայց այդպիսին կարող էր մարմարե սալիկին պատկերված և այլ տոհմի պատկանած քուրմը լինել:

Այս վերջինի պատկերումը մարմարե սալիկի աջ մասում վկայությունն է այն բանի, որ նա արևային էությանը օժտված քուրմ է համարվել և ցլագլուխը պաշտել է որպես Արևի աստծու խորհրդանիշ: Ըստ այսմ, պատահական չէ, որ նա ամուսնացել էր ամպրոպային էությանը օժտված արքայատոհմի ներկայացուցիչ արքայադստեր հետ, որը ցլագլուխը Ամպրոպի աստծու խորհրդանիշ է պաշտել: Երվանդունյաց դարաշրջանում, ըստ երևույթին, ամուսնա-խնամիական հարաբերություններում եղել է սովորույթ, որով երկրի բարձր տոհմերի՝ թագավորական (սատրապական) և քրմապետական (հյուպարքոսական), տարասեռ ներկայացուցիչները ամուսնանում էին միմյանց հետ: Այդպիսի ամուսնությանը տրվել է նաև կրոնական-գաղափարախոսական հիմնավորում՝ որպես գերագույն աստծու ամպրոպային և արևային հատկանիշների երկրային կրողների միավորման անհրաժեշտություն՝ ասել է, թե պետության հոգևոր հիմքերի ամրապնդման անհրաժեշտություն:

Նույնպիսի կապ գոյություն է ունեցել Հայոց սատրապների և Աքեմենյան թագավորների ընտանիքների միջև: Օրինակ՝ Քսենոփոնի ժամանակակից Հայոց սատրապ Օրոնտասը, ինչպես նշվեց, ամուսնա-



իր սեփականությունը: Իսկ դա կարող էր տեղի ունենալ մի պայմանով, եթե դա եղել է իր Երվանդունի կնոջ օժիտը <sup>13</sup>:

Նույնպիսի մոտեցում պետք է լիներ նաև Երվանդ Վերջինի քրմապետ հոր դեպքում: Սրա տիրույթը լինելու էր Բագարանը, իսկ նրան հարող հետագա Երվանդաշատի և Երվանդակերտի տարածքները լինելու էին նրա կնոջ՝ Երվանդի մոր, Երվանդունի արքայադստեր օժիտը: Դրանք ամուսնական այս կապի շնորհիվ դարձել էին այդ քրմապետի սեփականությունը, ապա ժառանգվել նրա ավագ որդի Երվանդ Վերջինի կողմից: Սա էլ իրավունք էր ստացել այստեղ՝ Ախուրյանի և Արաքսի գետախառնի շրջանում քաղաք և դաստակերտ կառուցելու և դրանք կոչելու իր անունով (Խորենացի, 1981, Բ, 1թ, 1ս, 1ա, 1բ): Երվանդ Վերջինի կառուցած Երվանդակերտի նաև **Մարմէտ** (հմմտ. **մայր**-հոգն. **մար-ք**) կոչվելու (Պետրոսյան Ս., Պետրոսյան Լ., 2011, 28-30), նրան կից տարածքում **Ծննդոց** կոչված անտառ-արգելանոցի ստեղծման հանգամանքները և դրանց խորենացիական նկարագրությունները՝ բնապատկերի գեղեցիկ կնոջ դեմքի մանրամասների համեմատությամբ, մտածել են տալիս, որ Երվանդն իր մորը աստվածացրած և նույնացրած է եղել Մայր դիցուհու հետ: Դա այլ մեկնաբանությամբ բխում էր նաև Երվանդի և Երվազի ծննդյան առասպելից:

Քննության առարկա մարմարե սալը Երվանդ թագավորը տեղադրած էր լինելու աչքի ընկնող տեղում, թերևս պալատական կառույցներից մեկում կամ տաճարում: Այն դիտողները նրանում տեսնելու էին Երվանդի արքայադուստր մորը և քրմապետ հորը, իսկ երեք տղա մանուկների շարքում աչքերով փնտրելու էին իրենց ժամանակակիցներին՝ ապագա թագավոր Երվանդ Վերջինին և ապագա քրմապետ Երվազին: Նրանց գտնելը հեշտ էր: Երեք տղաներից ավագը լինելու էր ապագա թագավոր Երվանդը, իսկ կրտսերը՝ Երվազը: Վերջինը պատկերված էր բազինին ավելի մոտ, երկար վարսերով (որի պատճառով Գ. Լևոնյանը նրան աղջիկ է համարել) (Լևոնյան, 1941, 69), ծնկաչոք է և նվիրաբերում պարունակող կձուձի կանթը բռնած: Հավանաբար, դրանցով շեշտվել է նրա ուխտանվեր լինելու հանգամանքը: Ուխտանվեր տղաների ավանդույթի առթիվ

<sup>13</sup>Այս առթիվ մի դրվագ ավելի վաղ շրջանից. մ.թ.ա. 820 թ. Ասորեստանի Շամշի-Ադադ թագավորը ասպատակել էր Հայկական լեռնաշխարհի հարավային շրջանները և, ի թիվս այլոց, գրավել նաև Իշպուհինի/Ուշպինային պատկանող 11 ամրոցներ և 200 բնակավայրեր: Ինչպես Ն. Ադոնցն է ցույց տվել, սրանք «իրականում գտնվել են Մուսասիրի և ոչ թե Ուրարտուի տարածքում» (Ադոնց, 1972, էջ 92-93): Հավելենք, Իշպուհինի սեփականությունը ճանաչված այդ ամրոցներն ու բնակավայրերը գտնվում էին Մուծածիրի տարածքում, որովհետև Իշպուհինի մուծածիրցի կնոջ օժիտն են եղել (Պետրոսյան, 2006, էջ 198-200):

Մովսես Խորենացին գրում է. «Արայեանն Արայ մեռանի ընդ Շամիրամայ ի պատերազմին, թողլով արու զաւակ ամենահարուստ և շատահանձար յիր և ի բան զԱնուշաւանն Սօսանուէր: Քանզի ձօնեալ էր ըստ պաշտամանց ի սօսիսն Արամանեկայ որ յԱրմաւիր» (Խորենացի, 1981, Ա, ի): Ավանդույթի պահպանումով ուխտանվեր մանուկներ ունեինք նաև քրիստոնեական դարերում: Մեր դիտարկումով, դրանց մազերը յոթ տարի շարունակ չէին կտրում, թողնելով՝ կամ հյուսում էին, կամ «ծիու պոչ» անում:

Երվանդ Վերջինը իր պատվիրած մարմարե պատկերաքանդակին, ինչպես տեսանք, 3+3=6 մանուկներ ներկայացնելով, Հայկազանց ավանդույթին իր հավատարմությունն էր արտահայտել: Նույն նպատակով է նա նախապատվություն տվել հասարակության եռադասյա կառուցվածքի հայկյան մոդելին, երբ իրեն՝ զինվորների, իսկ Երվազ եղբորը քրմերի դասապետ հռչակելով հանդերձ, Մուրացեանների տոհմապետ Արգամին ճանաչել էր բարիքներ արտադրողների դասապետ, իսկ նրա գահն համարել երկրորդը տերության մեջ (Խորենացի, 1981, Բ, խդ, խե, ծա, Պետրոսյան, 2006, 358-363): Այդ նույն նպատակին հետամուտ լինելով էր նա ընդունել **Երուանդ** գահանունը՝ հավանաբար քրմապետ հոր խորհրդով, որը և լինելու էր նրան թագավոր օձողը:

Ըստ Մովսես Խորենացու՝ հայոց մեծամեծները «միաբանեալ թագաորեցուցին զնա, առանց արանց յազգէն Բագրատունեաց լինել թագադիր» (Խորենացի, 1981, Բ, լե): Ըստ այսմ, Երվանդ վերջինի գահակալումը օրինական չի համարվել: Ըստ երևույթին, նույնիսկ **Երուանդ** անունը կրելու նրա իրավունքն էր կասկածի տակ դրվել: Խորենացու հավաստմամբ, **Երուանդ** և **Տիգրան** անուններ իրավամբ կրում էին Հայկազանց տոհմի գահակալները, իսկ «զվերջին Երուանդ և զՏիգրան ի սոցանէ ըստ յուսոյ կոչեցեալ» (Խորենացի, 1981, Ա, իբ) էին: Ինչու՞ էր Երվանդ Վերջինը ապօրինի գահակալ համարվել: Նախ, այն պատճառով, որ նա ոչ թե հայրական, այլ մայրական գծով էր Երվանդունի: Ապա, նա հայրական գծով օտար՝ պարսկական ծագում ուներ: Նրա վերաբերյալ Ստրաբոնը գրում է. (Հայաստանի) «Վերջին իշխողն է Օրոնտես՝ շառավիղ Հյուդարնեսի, որ մեկն էր յոթ պարսիկներից» (Ստրաբոն, 1940, 65) թեպետև Դարեհ I-ի զինակից Հյուդարնեսի (պարս. Վիդարնա) և նրա սերունդն համարված Երվանդ Վերջինի միջև 300 տարվա անջրպետ կար, բայց ինչպես Հայաստանում, այնպես էլ դրսում չէր մոռացվել նրա օտար ծագումը:

Հայաստանում հաստատված Հյուդարնեսի տոհմից ծագած քրմապետի սերունդները վաղուց հայացած էին լինելու, բայց զարմանալիորեն

հայագետները Երվանդ Վերջինին կամ պարսիկ էին համարում (Ստրաբոն, 1940, 117)<sup>14</sup>, կամ պարսկական ծագում էին վերագրում ամբողջ Երվանդունի<sup>15</sup> տոհմին, կամ մ.թ.ա. IV դ. վերջից թագավորող նրա հատվածին (ՀԺՊ, 1971, 504–506)<sup>16</sup>, անտեսելով Խորենացու հաղորդումները Երվանդ Վերջինի՝ իրեն նախորդած թագավորների տոհմից չլինելու մասին: Այնինչ, Ստրաբոնի հաղորդումից ևս բխում է, որ խոսքը Երվանդ Վերջինի անձի մասին է, որին նա «վերջին իշխող» է համարում ոչ թե «օրինական արքայատոհմի վերջին իշխողը» լինելու իմաստով (Սարգսյան, 1966, 205), այլ «**վերջին թագավորը**» լինելու իմաստով: Ըստ այսմ, հույն աշխարհագետը անմիջապես ավելացնում է. «Դրանից հետո **Արտաշես և Զարեհ՝ Հռովմեյացոց հակառակորդ Անտիոքոս Մեծի գորավարները, երկուսի բաժանեցին երկիրը**. առաջ իշխում էին թագավորի (իմա՛ Անտիոքոսի) հրամանի տակ...» (Ստրաբոն, 1940, 65): Այս ամենը համահունչ է Մովսես Խորենացու այն հաղորդումների հետ՝ ըստ որոնց Հայոց գահի օրինական ժառանգորդը եղել է ոչ թե Երվանդ Վերջինը, այլ Արտաշես I-ը (մ.թ.ա. 189–160 թթ.) (Խորենացի, 1981, Բ, 1է, խգ, խզ):

Երվանդունի արքայատոհմի ծագման առիթով առաջացած հանգույցը փորձել է բացել Ժ. Էլչիրեկյանը՝ համադրելով Երվանդ Վերջինի ծագման վերաբերյալ Ստրաբոնի հաղորդումը Պլուտարքոսի հաղորդման և Կոնագենեի Նեմրութ լեռան սալաքարերից մեկի հունարեն արձանագրության տվյալի հետ: Մրանցից առաջինում Արտաքսերքսես II-ի պալատական բժիշկ Կտեսիասի հետևությանը Պլուտարքոսը հաղորդում է հետևյալը. «Արշակը՝ թագավորի որդին, որ հետագայում վերանվանվեց Արտաքսերքսես, ամուսնանում է Հյուդարնեսի դստեր՝ Ստատեիրայի հետ» (Плутарх, 1987, Дандамаев, 1985, 206–207, 275 стр. 71), իսկ երկրորդում ասվում է. «Արոանդեսին՝ որդուն Արտասուրայի, որն ամուսնացած էր թագուհի Հռոդոգունեի հետ՝ դստեր արքայից արքա Մեծն Արտաքսերքսես Մնեմոնի» (Սարգսյան, 1966, 30): Այս համադրությունները Ժ. Էլչիրեկյանին մղում են հետևյալ եզրակացության. «Այսպիսով, Ռոդոգունեի միջնորդությամբ, որը Հյուդարնեսի թոռն էր և Արտաքսերքսեսի աղջիկը, Օրոնտեսը ազգական է դառնում միաժամանակ և Հյուդարնյաններին, և

<sup>14</sup>Անվանի լեզվաբան Յ. Աճառյանը նույն տեղում ծանոթագրում է. «Օրոնդես (Օրոնդես)՝ պարսիկ թագավոր Հայոց, հաջորդ Ադուարդի, Սելևկյանների գերիշխանության տակ (247 թ.)»: (Ստրաբոն, 1940, էջ 117):

<sup>15</sup>Ս. Կրկյաշարյանն էլ գրում է. «Հավանական է, որ Արմենիայի սատրապ նշանակված լինելը պարսիկ Օրոնտեսների (Երվանդների) տոհմից» (Կրկյաշարյան, 2005, էջ 58):

<sup>16</sup>Գ. Տիրացյանի կարծիքով. «Հայաստանի սատրապ Օրոնտեսը բարձրատոհմիկ ազնվականությանն էր պատկանում: Ստրաբոնի մի վկայությունից երևում է, որ նրա նախնին՝ Դարեհ I-ի զինակից Հիդարնեսն էր» (Հայ ժողովրդի պատմություն, 1971, էջ 454):

Աբեմենյաններին: Ուրեմն, Ստրաբոնի վկայությունն ու Կոմագենեի Նեմրուդ լեռան արձանագրության վկայությունը լրացնում են միմյանց և ոչ թե հակասում» (Էլչիբեկյան, 1971, 112): Այո՛, բայց սա Երվանդունիների տոհմաբանություն կլիներ, եթե նրանք իրենց տոհմական ժառանգության մեջ գերապատվությունը տային ոչ թե արական, այլ իգական գծով արյունակցությանը: Բայց այդպես չէր:

Հայտնի է, որ Արտաշես I-ը իր սահմանաքարերի արձանագրություններում իրեն րwոճոկո//**Երուանդական**, այսինքն՝ **Երվանդյան, Երվանդունի** է կոչում (Периханян, 1965, 108, 128): Հայագիտության մեջ ճանաչում գտած կարծիքի համաձայն, նա իր գահակալմանը օրինական տեսք տալու համար է դա արել, որովհետև, իբրև թե, հոր կողմից (հայրական գծով) Երվանդունի չէր, այլ մոր կողմից էր Երվանդունի (ՀԺՊ, 1971, 529): Այս տեսակետի պաշտպան Գ. Սարգսյանը գրում է. «Արտաշեսը, ճիշտ է, Երվանդյաններից է սերում, ինչպես ինքն է պնդում, բայց սերվում է նրանցից ոչ թե ուղիղ գծով, այլ կողմնակի՝ մոր միջնորդությամբ» (Սարգսյան, 1966, 205): Իսկ ուղիղ գծով Երվանդունի, հակառակ Մովսես Խորենացու, հայագետ պատմաբանն համարում է Երվանդ Վերջին թագավորին (Սարգսյան, 1966, 204):

Երվանդունի/Երվանդյան տոհմի, Երվանդ Վերջինի տապալումից հետո էլ շարունակական գահակալում ունենալու մասին է խոսում ոչ միայն Արտաշես I-ի **Երվանդական**, այլև Տիգրան Մեծի (մ.թ.ա. 95-54 թթ.) **Երուանդեան** կոչվելու հանգամանքը: **Երուանդ** անվան Երուանդունի/Հայկազանց տոհմում կիրառված լինելու իր միտքը Խորենացին շարունակում է **Տիգրան** անվան վերաբերյալ գրելով. «Այսպես և բազումք անուանեալ Տիգրան, մի է և միայնակ սա ի Հայկազանց, որ...զիշխանութին Մարաց և Պարսից յինք հափշտակեաց» (Խորենացի, 1981, Ա, 1ա): Մեր պատմագրության մեջ իրավամբ ընդունված տեսակետի համաձայն, այս տողերը վերաբերում են ոչ թե մ.թ.ա. VI դ. երկրորդ կեսին իշխած Տիգրան Երվանդյանին, այլ մ.թ.ա. I դ. առաջին կեսին գահակալած Տիգրան Մեծին (Աբեղյան, 1966, Ա, 97-115): Իսկ որ դրանք Տիգրան Երվանդյանին վերագրելիս Մովսես Խորենացին «շփոթվել» կամ «սխալվել» է՝ մնացել է առանց բացատրության (Աբեղյան, 1966, Ա, 115; Խորենացի, 1981, 472-473, ծան. 79): Գ. Սարգսյանը ճիշտ էր, երբ փորձում էր կռահել՝ պատճառը կարո՞ղ էր լինել Տիգրան Մեծի կողմից **Երվանդյան** տոհմանվան գործածումը (Սարգսյան, 1966, 211, ծան. 122): Բանն այն է, որ հայոց հին պատմագրության մեջ Տիգրան II Մեծն համարվում էր Արշակունի, երբ մեր

պատմահոր օգտագործած աղբյուրում («Չորս հազներգութիւնք»)<sup>17</sup> նրա մեծագործությունները հիշատակված են եղել **Տիգրան Երուանդեան** անվան տակ: Դժվար չէ կռահելը, որ այս դեպքում Խորենացու աղբյուրի հեղինակը ծանոթ չի եղել Տիգրան Մեծին Արշակունի համարող տեսակետին և նրան կոչում է իրեն հայտնի նրա **Երուանդեան** տոհմանունով: Բնականաբար, «Չորս հազներգութիւնք»-ի հեղինակը չէր կարող իմանալ, որ այս Տիգրան Երվանդյանից, այսինքն՝ Տիգրան II Մեծից գրեթե 500 տարի առաջ եղել է նույն արքայատոհմից սերած նույնանուն, բայց ոչ նույնքան հայտնի թագավոր:

Երվանդունի արքայատոհմի սատրապ (աքեմենյան դարաշրջանում) և թագավոր (հելլենիստական դարաշրջանում) ներկայացուցիչների կրած **Երուանդ/Արուանդ** և հունաձև Օրենտաս/Օրոնտես/Արուանդես անուններն առնչվելով մի կողմից մ.թ.ա. VI դարի Տրգրան Երվանդյանի և Վարդգեսավանի հիմնադրման առթիվ հիշատակված Հայկազանց Երվանդ թագավորի անուն-տոհմանուններին, իսկ մյուս կողմից՝ մ.թ.ա. II-I դարերում ապրած Արտաշես I-ի և Տիգրան Մեծի 'rwndkn (Периханян, 1965, 108, 121, 128)//**Երուանդական, Երուանդեան** տոհմանվանը, լավագույն ապացույցներն են Երվանդունի արքայատոհմի անընդհատ գոյության: Տոհմի անվան հնությունը ևս խոսում է նրա բնիկ հայկական լինելու մասին: **Երուանդ** անունը ակրոստիքոս-անագրամայով ավանդված է այնպիսի հնագույն մի օրհներգում ինչպիսին էր նախապես Արեգ աստծուն ձոնված «Վահագնի երգ»-ը (հմմտ. **Եր-եւ-ընդ-Եր-եւ-անդ**//\***Եր-ու-անդ**) (Պետրոսյան, 1981, 81-82): **Երուանդ**-ը նախապես եղել է Ամպրոպի աստծու բուն հայկական անունը կամ մականունը, որ հայ թագավորները և սատրապները իբրև գահանուն են գործածել: Այդ իսկ պատճառով այն դարձել է Հայկազանց արքայատոհմի այս ճյուղի **Երուանդեան**//**Երուանդական**//**Երուանդունի** տոհմանվան հիմքը:

**Երուանդ** անունը «ամպրոպային» բնույթ ունի: Նրա հիմքում հ.-ե. \*per- «խփել» արմատն է, որից են ծագում նաև **հարուլ** «զարնել», «նետ արձակել» և **հարել** «եղջյուրով խփել» բառերը (ՀԱԲ, 1944, III, 53-54): Այս երկրորդի առնչությամբ հիշենք, որ ամպրոպի աստծու սրբազան կենդանիներն էին համարվում նախ և առաջ եղջերավորները՝ ցուլեր, նոխագներ, խոյեր (պատկերացվում էին նաև թևավոր) (ՀԱԲ, 1944, III, 52-55), որոնք եղել են նրանց տոտեմական նախատիպերը ևս: Հ.-ե. \*per- արմատից են նաև ազգակից լեզուներում ամպրոպային աստվածներին և եր-

<sup>17</sup> Ոմանց կարծիքով՝ «Չորս հազներգութիւնք»-ի հեղինակը կարող էր լինել Դիողորոս Սիկիլիացին:

և ույթներին հատկացված մի շարք անուններ: Դրանցից են խեթերեն *Perua/Pirya* «հին խեթական ամպրոպի աստվածը», հին հնդկ. *parjanya* «անձրևաբեր ամպ», *Parjanya* «ամպրոպային-անձրևաբեր աստվածություն», թրակ. *περκωνις, περκους* «հեծյալ նիզակավոր Հերոս աստվածության մականունը», ալբան. *perëndi* «երկինք, Աստված», հին ռուս. *перунъ* «իշխանական գուգազի հովանավոր ռազմիկ աստվածություն», լիտվ. *Perkūnas*, լատիշ. *Perkōns*, ուկր. *перун* «փայլակ, կայծակ», չեխ. *perun*, լեհ. *piorun* «որոտ», նորիստ. *Pärun* «պատերազմի աստված», հին իսլ. *Fiorgyn/Fjorgyn* «ամպրոպի աստված Թորի մայրը» (*Гамкредлидзе, Иванов, 1984, 615, 793; Топоров, 1980, 295*): Այս շարքի մեջ իր տեղը պետք է զբաղեցնի նաև հայկական **Երուանդ/Արուանդ**-ը ծագած հ.-ե. \**perunt-* նախաձևից (Պետրոսյան, 1981, 83-85; Պետրոսյան, 2006, 332-337):

### Եզրակացություններ

1. Հին հայկական արվեստի ուշագրավ նմուշ մարմարե պատկերաքանդակը, որի լուսանկարը պահպանված է, առաջին հայացքից և եթ քացահայտում է իր վաղ հելլենիստական բնույթը: Հավանաբար, այն հայտնաբերվել է Արմավիրի կամ Երվանդաշատի ավերակներից՝ ապօրինի պեղումների միջոցով:
2. Նրա պատկերների պաշտամունքային և գաղափարախոսական հենքը միաձույլ համակարգ է և ժխտում է պատկերաքանդակը կեղծիք համարող տեսակետը, քանզի բոլոր պատկերները իմաստային փոխկապակցվածության մեջ են: Դրանք բոլորը համախմբված են Ջևս-Արամազդ գերագույն աստծու կերպարի մեջ միավորված Ամպրոպի և Արևի աստվածների պաշտամունքների շուրջ: Ջևս-Արամազդի խորհրդանիշը ցլագլուխն է:
3. Պատկերաքանդակն ունի համաչափության յուրահատուկ առանցքը, որով բաժանվում է ձախ/իզական և աջ/արական մասերի: Ձախում արքայական թագով մայրն է երեք մանուկ դուստրերի, իսկ աջում փարթամ սորուքով հայրն է երեք մանուկ որդիների հետ միասին: Ձախ կողմում գտնվող իզական սեռի ներկայացուցիչները բարձրացրել են իրենց ձախ ձեռքերը, իսկ աջ կողմում գտնվող արական սեռի ներկայացուցիչները՝ աջ ձեռքերը: Մոր և հոր կողմից ցլագլխին կատարված նվիրաբերումները ևս ձախ/աջ հակադրամիասնության մեջ են. ձախ/ամպրոպայինի դեպքում մատուցվող փունջը հնգյակ է կազմում, աջ/արևայինի դեպքում՝ եռ-

յակ: Դրանք համապատասխանում են Ամպրոպի և Արևի աստվածներին ձոնված «5» և «3» խորհրդապաշտական թվերին:

4. Ձախ կողմի երեք աղջիկ մանուկների և աջ կողմի դարձյալ երեք տղա մանուկների՝ 3+3=6, թիվը խոսում է այն մասին, որ պատկերաքանդակի ամուսնական գույգի զավակների թիվը բացահայտորեն համապատասխան է դրված Հայկազանց/Երվանդունի արքայատոհմի հիմնադիր Հայկ նահապետի երեք որդիների և երեք դուստրերի թվին: Դրանք, ըստ ավանդության դարձել էին Հայկն (Կշիռ) համաստեղության պայծառ վեց աստղերը:
5. Մարմարե պատկերաքանդակն արտացոլում է մ.թ.ա. III դ. կեսերի պատմական դեպքերը, երբ Մեծ Հայքի Արշամ/Արշակ թագավորի (մ.թ.ա. 259–222 թթ.) դուստրը ամուսնանալով երկրի քրմապետի հետ, լույս աշխարհ էր բերել ապագա թագավոր Երվանդ Վերջինին (մ.թ.ա. 222–201 թթ.) և Երվազ քրմապետին: Երեք տղաներից ավագը լինելու է ինքը՝ մարմարե պատկերաքանդակը պատրաստել տված ապագա թագավորը՝ Երվանդը, իսկ կրտսերը՝ երկար վարսերով, լինելու է ապագա քրմապետ Երվազը:
6. Մարմարե պատկերաքանդակը նաև պատմական վավերագիր է: Նրա միջոցով հաստատվում են Մովսես Խորենացու հաղորդումները Երվանդ Վերջինի **մայրական** գծով Երվանդունի (ըստ նրա՝ Արշակունի) լինելու մասին, իսկ հոր գծով նա քրմապետների տոհմից էր:
7. Հաստատվում է նաև, որ հայրական գծով Երվանդունի (ըստ Խորենացու, Արշակունի) եղել է ոչ թե Երվանդ Վերջինը, այլ նրա հակառակորդ Արտաշեսը՝ Մեծ Հայքի ապագա Արտաշես I թագավորը (մ.թ.ա. 189–160 թթ.): Նա իրավամբ է կրել **Երվանդական** տոհմանունը: Իրավամբ **Երվանդյան** է կոչվել (ըստ «Չորս հագներգութինը»-ի հեղինակի) նաև Տիգրան II Մեծը (մ.թ.ա. 95–55 թթ.)՝ Արտաշես I-ի թոռը:

**Սարգիս Գ. Պետրոսյան** – մենագրությունների և բազմաթիվ գիտական հոդվածների հեղինակ է: Զբաղվում է Հայաստանի և Արևելքի երկրների հնագույն ու հին պատմության, ինչպես նաև հոգևոր մշակույթի հարցերով:

**Լուսինե Ս. Պետրոսյան** – Գիտական հոդվածների հեղինակ է: Զբաղվում է Երվանդունյաց երկրորդ թագավորության (մ.թ.ա. IV–III դդ.) քաղաքական պատմության և հարակից հարցերով:

## Օգտագործված գրականություն

1. **Աբեղյան Մ.** (1975). Երկեր. հատ. Է. Եր.: ՀՍՍՀ ԳԱ հրատ.:
2. **Աբրահամյան Ա.** (1973). Հայոց գիր և գրչություն. Եր. Երևանի պետական համալսարանի հրատ.:
3. **Ագաթանգեղայ** պատմություն Հայոց, Քննական բնագիրը Գ. Տեր-Մկրտչյանի և Ս. Կանայանի. (1983). Եր.: Երևանի համալսարանի հրատ.:
4. **Ադոնց Ն.** (1972). Հայաստանի պատմություն. Ակունքները X-VI դդ. մ.թ.ա.: Եր.: Երևանի պետական համալսարանի հրատ.:
5. **Ազիզբեկյան Հ.** Նախաքրիստոնեական հայատառ արձանագրություն (լրացված): Մի մոռացված քանդակապատկերի պատմություն. <https://lousavor-avedis.org/?p=38904> (հասանելի՝ 14.10.2025)
6. **Ալիշան Ղ.** (2002). Հայոց հին հավատքը կամ հեթանոսական կրոնը. Եր.: «Հրազդան»:
7. **Աղայան Է.** (1974). Բառաքնական և ստուգաբանական հետազոտություններ. Եր.: ՀՍՍՀ ԳԱ հրատ.:
8. **Աճառյան Հ.** (1971). Հայերեն արմատական բառարան. հատ. I. Երևանի պետական համալսարանի հրատ.:
9. **Աճառյան Հ.** (1977). Հայերեն արմատական բառարան. հատ. III. Երևանի պետական համալսարանի հրատ.:
10. **Աճառյան Հ.** (1979). Հայերեն արմատական բառարան հատ. IV. Երևանի պետական համալսարանի հրատ.:
11. **Երեմյան Ս.** (1963). Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի. Եր.: ՀՍՍՀ ԳԱ հրատ.:
12. **Էլչիրեկյան Ժ.** (1971). Երվանդունիների ծագման հարցի շուրջ. «Պատմաբանասիրական հանդես». N 2:
13. **Թովմա Արծրունի և Անանուն.** (1985). Պատմություն տանն Արծրունեաց. Բնագիրը հրատարակության պատրաստեց, աշխարհաբար թարգմ. և ծանոթագր. Վ. Վարդանյան. Երևանի պետական համալսարանի հրատ.:
14. **Թումանյան Բ.** (1968). Հայ աստղագիտության պատմություն (XIX դ. սկզբից մինչև 1920 թ.). Երևանի պետական համալսարանի հրատ.:
15. **Իսրայելյան Մ.** (1971) Էրեբունի բերդ-քաղաքի պատմություն (ըստ արձանագրական և հնագիտական տվյալների). Եր.: «Հայաստան»:
16. **Լալայան Ե.** (1988). Երկեր. հատ. II. Եր.: ՀՍՍՀ ԳԱ հրատ.:
17. **Լևոնյան Գ.** (1941). Մի առեղծվածային քանդակապատկեր. «Սովետական արվեստ». Օրգան Հայկական ՄՍՌ ժողկոմսովետին կից Արվեստի վարչության. Եր.: N 2-3:
18. **Կարախանյան Գ., Սաֆյան Պ.** (1970). Սյունիքի ժայռապատկերները, «Հայաստանի հնագիտական հուշարձանները». 4. Ժայռապատկերներ. Եր.: ՀՍՍՀ ԳԱ հրատ.:
19. **Կրկյաշարյան Ս.** (2005) Հին Հայաստանի պետական կառուցվածքը մ.թ.ա. VI- մ.թ. IV դդ.). Եր.: «Լուսակն»:

20. **Կուն Ն.** (1979). Հին Հունաստանի լեգենդներն ու առասպելները.Եր. «Սովետական գրող»:
21. «Հայ ժողովրդական հեքիաթներ». (ՀԺՀ). (1977). հգկ. VIII, Եր.: ՀՍՍՌ ԳԱ հրատ.:
22. «Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա». (1981). հնտ. I: Երևանի պետական համալսարանի հրատ.:
23. «Հայ ժողովրդի պատմություն». (ՀԺՊ) (1971). հատ. I. Եր.: ՀՍՍՀ ԳԱ հրատ.:
24. «Հայոց հին և միջնադարյան բանաստեղծության քրեստոմատիա.(1979). Երևանի պետական համալսարանի հրատ.:
25. **Հմայակյան Ս.** (1990). Վանի թագավորության պետական կրոնը. Եր.: ԳԱ հրատ.:
26. **Ղանալանյան Ա.** (1969). Ավանդապատում. Եր.: ՀՍՍՀ ԳԱ հրատ.:
27. **Ղափանցյան Գ.** (1945). Արա Գեղեցիկի պաշտամունքը. Եր.: ՀՍՍՌ ԳԱ հրատ.:
28. **Ղափանցյան Գ.** (1961). Հայոց լեզվի պատմություն (հին շրջան). Եր.: ՀՍՍՌ ԳԱ հրատ.:
29. **Մալխասյանց Ստ.** (1944) Հայերեն բացատրական բառարան. հատ.I.Եր.: ՀՍՍՌ ԳԱ հրատ.:
30. **Մալխասյանց Ստ.** (1944). Հայերեն բացատրական բառարան. հատ.III. Եր.: ՀՍՍՌ ԳԱ հրատ.:
31. **Մալխասյանց Ստ.** (1945). Հայերեն բացատրական բառարան. հատ. IV.Եր.: ՀՍՍՌ ԳԱ հրատ.:
32. **Մովսես Խորենացի** (1981) Հայոց պատմություն. Աշխարհաբար թարգմ. և մեկնաբանությունները Ս. Մալխասյանցի. Երևանի պետական համալսարանի հրատ.:
33. «**Մովսիսի Խորենացու** պատմութիւն Հայոց». (1981). Քննական բնագիրը Մ. Աբեղյանի և Ս. Հարությունյանի. Երևանի պետական համալսարանի հրատ.:
34. **Մովսիսյան Ա.** (2005). Հայաստանը Քրիստոսից առաջ երրորդ հազարամյակում (ըստ գրավոր աղբյուրների). Երևանի պետական համալսարանի հրատ.:
35. **Մուշեղյան Խ.** (1985). Գրախոսություն Զ. Պտուկյանի հոդվածի. «Պատմաբանասիրական հանդես». N 4:
36. **Մուշեղյան Խ.** (1983). Դրամական շրջանառությունը Հայաստանում (մ.թ.ա. V դ - մ.թ. XIV դ.). Եր.: ՀՍՍՀ ԳԱ հրատ.:
37. **Պետրոսյան Լ.** (2009). Արշակ անվան Հայաստանում կիրառվելու ժամանակի և ոլորտի մասին. «Գյումրու պետական մանկավարժական ինստիտուտ. հանրապետական գիտական նստաշրջանի նյութերի ժողովածու». Պրակ 2:
38. **Պետրոսյան Լ.** (2009). Արշամ անունով թագավորի վերաբերյալ որոշ մանրամասներ, «Գյումրու պետական մանկավարժական ինստիտուտ. հանրապետական գիտական նստաշրջանի նյութերի ժողովածու»:



56. **Քսենոփոն.** (1970). Անարախի թարգմանությունը՝ Ս. Կրկյաշարյանի: Եր.: ՀՍՍՀ ԳԱ հրատ.:
57. **Адонц Н.** (1971). Армения в эпоху Юстиниана. Изд. Ереванского университета.
58. **Гамкрелидзе Т. В., Иванов В. В.** (1984). Индоевропейский язык и индоевропейцы. Т. II. Изд. Тбилийского университета.
59. **Дандамаев М. А.** (1985). Политическая история Ахеменидской державы, Москва. «Наука».
60. Дуалистические мифы. «Мифология. Золотой фонд. Энциклопедия». (2003). Главный редактор Е. М. Мелетинский. Москва. Большая российская энциклопедия.
61. Древнегреческо-русский словарь. (1958). Т. II. Москва. Гос. Изд. Иностраннных и национальных словарей.
62. **Дьяконов И. М.** (1989). Ранние деспотии в Месопотамии. «История древнего мира. Ранняя древность». Москва. Главная редакция восточной литературы.
63. **Иванов В. В., Топоров В. Н.** (1974). Исследования в области славянских древностей. Москва. «Наука».
64. **Капанцян Гр.** (1956). Историко-лингвистические работы к начальной истории армян. Ереван. Изд. АН АрмССР.
65. **Нерознак В. П.** (1978). Палеобалканские языки. Москва. «Наука».
66. **Парандовский Ян.** (1971). Мифология. Верования и легенды греков и римлян. Москва. Изд. Детлит.
67. **Периханян А. Г.** (1965). Арамейская надпись из Зангезура (некоторые вопросы среднеиранской диалектологии). «Պատմաքրականության հանդես»: Թիվ 4.
68. **Плутарх.** (1987). Избранные жизнеописания. В двух томах. Переводы с древнегреческого, составление, вступительная статья и примечания М. Томашевской. Москва. «Правда».
69. **Топоров В. Н.** (1980). Прусский язык. Словарь I-K. Москва. «Наука».
70. **Фрай Р.** (1972). Наследие Ирана. Москва. «Наука».
71. **Bedoukian Paul Z.** (1983). Coinage of the Armenian kingdoms of Sophene and Commagene. «The American Numismatic society». Museum Notes. 28.
72. **Belli O.** (2000). The Anzaf fortresses and gods of Urartu. Istanbul. Archaeology and Art Publications.
73. **Becher L.** (1985). Amältheia, «Lexikon der Antike». VEB. Leipzig. Bibliographisches Institut.
74. **Brandenstein Wilhelm und Mayrhofer Manfred** (1964). Handbuch des Altpersischen. Pub. Wiesbaden. O. Harrassowitz.
75. **Comte Fernand** Larousse des mythologies du Monde. (2005). Paris. Éditions France Loisirs.
76. **Herzfeld E.** (1947). Zoroaster and his world. London. Pub. Princeton University Press.
77. **Plutarch.** Artaxerxes.  
[https://penelope.uchicago.edu/Thayer/E/Roman/Texts/Plutarch/Lives/Artaxerxes\\*.html](https://penelope.uchicago.edu/Thayer/E/Roman/Texts/Plutarch/Lives/Artaxerxes*.html)  
 (հասցևիդ՝ 09.10.2025)

### Bibliography (Latin script)

1. **Abeghyan M.** (1975). Yerker, h. E, Yerevan. HSSH GA hrat. **(In Armenian).**
2. **Abrahamyan A.** (1973.) Hayots' gir yev grch'ut'yun. Yerevan. YePH hrat. **(In Armenian).**

3. **Acharyan H.** (1979) Hayeren armatakan bařaran h. IV. Yerevan. YePH hrat. **(In Armenian)**.
4. **Acharyan H.** (1971) Hayeren armatakan bařaran. h. I. Yerevan. YePH hrat. **(In Armenian)**.
5. **Acharyan H.** (1977). Hayeren armatakan bařaran. h. III. Yerevan. YePH hrat. **(In Armenian)**.
6. **Adonc N.** (1971). Armenija v epoxu Justiniana. Yerevan. Izd. Yer. Univers. **(In Russian)**.
7. **Adonts' N.** (1972). Hayastani patmut'yun. Akunk'nerē X-VI dd. m.t'.a., Yerevan. YePH hrat. **(In Armenian)**.
8. **Agat'angeghay** patmut'iwn Hayots'. (1983). K'nnakan bnagirē G. Ter-Mkrтч'yani yev S. Kanayani, Yerevani hamalsarani hrat. **(In Armenian)**.
9. **Aghayan Ē.,** (1974). Bařak'nnakan yev stugabanakan hetazotut'yunner, Yerevan . HSSH GA hrat.**(In Armenian)**.
10. **Alishan Gh.** (2002). Hayots' hin havatk'ē kam het'anosakan kronē. Yerevan. «Hrazdan» **(In Armenian)**.
11. **Azizbekyan H.** Nakhak'ristoneakan hayatar ardzanagrut'yun (lrats'vats). Mi mořats'vats k'andakapatkeri patmut'yun. <https://lousavor-avedis.org/?p=38904> (14.10.2025) **(In Armenian)**.
12. **Dandamajev M. A.** (1985). Politicheskaja istorija Axemenidskoj derzhavy. Moskva. «Nauka» **(In Russian)**.
13. **D'jakonov I. M.** (1989). Rannije despotii v Mesopotamii. «Istorija drevnego mira. Rannjaja drevnost». Moskva. Glavnaja redakcija vostochnoj literatury **(In Russian)**.
14. «Drevnegrechesko-russkij slovar'» (1958). T. II. Moskva. Gos. Izd. Inostrannyx i nacional'nyx slovaroj **(In Russian)**.
15. Dualisticheskiye mify (2003). «Mifologija. Zolotoj fond. Enciklopedija». Glavnyj redaktor Je. M. Meletinskij. Moskva. Bol'shaja rossijskaja entsiklopedija **(In Russian)**.
16. **Elch'ibekyan Zh.,** (1971). Yervandunineri tsagman harts'i shurj, «Patmabanasirakan handes». N 2 **(In Armenian)**.
17. **Fray R.** (1972). Naslediye Irana. Moskva. «Nauka» **(In Russian)**.
18. **Gamkrelidze T. V., Ivanov V. V.** (1984). Indojevropejskij jazyk i indojevropejtcy. T. II. Tbilisi. Izd. Tbilijskogo institute **(In Russian)**.
19. **Ghanalanyan A.** (1969). Avandapatum. Yerevan. HSSH GA hrat. **(In Armenian)**.
20. **Ghap'ants'yan G.** (1945). Ara Geghets'iki pashtamunk'ē. Yerevan. HSSRR GA hrat. **(In Armenian)**.
21. **Ghap'ants'yan G.** (1961). Hayots' lezvi patmut'yun (hin shrjan). Yerevan. HSSRR GA hrat. **(In Armenian)**.
22. «Hay zhoghovrdakan hek'iat'ner. (1977). h. VIII. Yerevan. HSSRR GA hrat. **(In Armenian)**.
23. «Hay zhoghovrdi patmut'yan k'restomatia». (1981). H. I. Yerevan. YePH hrat. **(In Armenian)**.
24. «Hay zhoghovrdi patmut'yun». (1971). H. I. Yerevan. HSSH GA hrat. **(In Armenian)**.
25. «Hayots' hin yev mijnadaryan banasteghtsut'yan k'restomatia». (1979). Yerevan. YePH hrat. **(In Armenian)**.
26. **Hmayakyan S.** (1990). Vani t'agavorut'yan petakan kronē. Yerevan. GA hrat. **(In Armenian)**.
27. **Israyelyan M.** (1971). Erebuni berd-k'aghak'i patmut'yun (ēst ardzanagrakan yev hnagitakan tyvalneri). Yerevan. «Hayastan» **(In Armenian)**.

28. **Ivanov V. V., Toporov V. N.** (1974). Issledovaniya v oblasti slavyanskix drevnostej. Moskva. «Nauka» **(In Russian)**.
29. **Karakhanyan G., Safyan P.** (1970). Syunik'i zhayrapatkernerë. «Hayastani hnagitakan hushardzannerë». 4. Zhayrapatkerner. Yerevan. HSSH GA hrat **(In Armenian)**.
30. **Kapancyan Gr.** (1956). Istoriko-lingvističeskije raboty k nachal'noj istorii armjan. Jerevan. AN ArmSSR **(In Russian)**.
31. **Krkyasharyan S.** (2005). Hin Hayastani petakan karuts'vatsk'ë m.t'.a. VI- m.t'. IV dd.). Yerevan. «Lusakn» **(In Armenian)**.
32. **K'senop'on** (1970). Anabasis. T'argmanut'yunë S. Krkyasharyani, Yerevan. HSSH GA hrat. **(In Armenian)**.
33. **Kun N.** (1979). Hin Hunastani legendnern u ařaspelnerë. Yerevan. «Sovetakan grogh» **(In Armenian)**.
34. **Lalayan Ye.** (1988). Yerker. H. II. Yerevan. HSSH GA hrat. **(In Armenian)**.
35. **Levonyan G.** (1941). Mi ařeghtsvatsayin k'andakapater. «Sovetakan arvest». Yerevan. Organ Haykakan SSR Zhoghkomsosvetin kits' Arvesti varch'ut'yan. T'iv 2-3 **(In Armenian)**.
36. **Malkhasyants' St.** (1944). Hayeren bats'atrankan bařaran. H. I. Yerevan. HSSR GA hrat. **(In Armenian)**.
37. **Malkhasyants' St.** (1944). Hayeren bats'atrankan bařaran. H. III. Yerevan. HSSR GA hrat. **(In Armenian)**.
38. **Malkhasyants' St.** (1945). Hayeren bats'atrankan bařaran. H. IV. Yerevan. HSSRR GA hrat. **(In Armenian)**.
39. **Movses Khorenats'i.** (1981). Hayots' patmut'yun. Ashkharhabar t'argm. yev meknabanut'yunnerë S. Malkhasyani. Yerevan. YePH hrat. **(In Armenian)**.
40. «**Movsisi Khorenats'woy** patmut'iwn Hayots'». (1981). K'nnakan bnagirë M. Abeghyani yev S. Harut'yunyani. Yerevan. YePH hrat. **(In Armenian)**.
41. **Movsisyan A.** (2005). Hayastanë K'ristosits' araj yerrord hazaramyakum (ëšt gravor aghbyurneri). Yerevan. YePH hrat. **(In Armenian)**.
42. **Musheghyan Kh.** (1985). Grakhosut'yun Z. Ptukyani hishyal hodvatsi. «Patmabanasirakan handes». N 4 **(In Armenian)**.
43. **Musheghyan Kh.** (1983). Dramakan shrjanařut'yunë Hayastanum (m.t'.a. V d - m.t'. XIV d.). Yerevan. HSSH GA hrat. **(In Armenian)**.
44. **Neroznak V. P.** (1978). Paleobalkanskije jazyki. Moskva. «Nauka» **(In Russian)**.
45. **Parandovskij Jan.** (1971). Mifologija. Verovaniya i legendy grekov i rimljan. Moskva. Izd. Detlit **(In Russian)**.
46. **P'awstosi Biwandats'woy** (1987). Patmut'iwn Hayots'. Bnagiry K'. Patkanyani. Yerevan. YeH hrat. **(In Armenian)**.
47. **Perixanjan A. G.** (1965). Aramejskaja nadpis' iz Zangezura (nekotoryje voprosy sredneiranskoj dialektologii). «Patmabanasirakan handes». N 4 **(In Russian)**.
48. **Petrosyan L.** (2009). Arshak anvan Hayastanum kirařvelu zhamanaki yev volorti masin. «Gyumru petakan mankavarzhakan institut, hanrapetakan gitakan nstashrjani nyut'eri zhoghovatsu». Prak 2 **(In Armenian)**.
49. **Petrosyan L.** (2009). Arsham anunov t'agavori veraberyal vorosh manramasner. «Gyumru petakan mankavarzhakan institut, hanrapetakan gitakan nstashrjani nyut'eri zhoghovatsu». **(In Armenian)**.

50. **Petrosyan L.** (2010). «K'art'lis ts'khovreban» Hayots' Arshak t'agavori masin. HH GAA Shiraki hayagitakan hetazotut'yunneri kentron. «Gitakan ashkhatut'yunner». Yerevan. H. XIII (**In Armenian**).
51. **Petrosyan S.** (2006). Daserē yev yerradasut'yan drsevorunnerē hin Hayastanum. Yerevan. HH GAA PI «Mesrop Ashchean matenashar» (**In Armenian**).
52. **Petrosyan S.** (2008). Hayots' mehenagrut'yan akunk'nerum. Gyumri. «Dpir» (**In Armenian**).
53. **Petrosyan S.** (1996 ). Hin hayots' yeramasn amsuay khorhurdy. «Handes amsōreay hayagitakan usumnat'ert'». Vienna. T'iv 1-12 (**In Armenian**).
54. **Petrosyan S.** (2020). Khet'akan ark'a Supiluliuma I-i knik'i yev haykakan yerknayin khorhrdanschanneri yndhanrut'yunnerē. «Vem» hands. T'iv 1 (**In Armenian**).
55. **Petrosyan S.** (2013). Patmakann u araspelabanakanē Vardges Manuki avandazruys'nerum. HH GAA Shiraki hayagitakan hetazotut'yunneri kentron. «Gitakan ashkhatut'yunner». Yerevan. H. XV (**In Armenian**).
56. **Petrosyan S.** (1979). «Sharayi ts'eghamiut'yunē» Haykakan lernashkharhi hyusis-arevelk'um (m.t'.a. VI-V dd.). «Lraber hasarakakan gitut'yunneri». T'iv 12 (**In Armenian**).
57. **Petrosyan S.** (1981). «Vahagni yergi» akrostik'osneri verakangnman yev vertsanman p'ordz. «Lraber hasarakakan gitut'yunneri». T'iv 4 (**In Armenian**).
58. **Petrosyan S., Petrosyan L.** (2011). Anin yev Yervanduninerē. HH GAA Shiraki hayagitakan hetazotut'yunneri kentron. «Gitakan ashkhatut'yunner». Yerevan. H. XIV (**In Armenian**).
59. **Petrosyan S., Petrosyan L.** (2006). Hayots' Arsham t'agavorē (gortsuneut'yan urvagits). «Gyumru petakan mankavarzhakan institut, hanrapetakan gitakan nstashrjani nyut'er' nvirvats HH ankakhut'yan 15-amyakin» (**In Armenian**).
60. **Plutarx.** (1987). Izbrannyje zhizneopisanija. V dvux tomax, Perevody s drevnegrecheskogo. Sostavlenije, vstupil'el'naja stat'ja i primechanija M. Tomashevskoj. Moskva. «Pravda» (**In Russian**).
61. **Sardaryan S.** (1967). Nakhnadaryan hasarakut'yunē Hayastanum. Yerevan. YePH hrat. (**In Armenian**).
62. **Sargsyan G.** (1966). Hellenistakan darashrjani Hayastany yev Movses Khorenats'in. Yerevan. HSSH GA hrat. (**In Armenian**).
63. «Sasna tsrēr zhoghovrdakan vep». (1936). H. A. Yerevan. Petakan hratarakch'ut'yun. (**In Armenian**).
64. «Sasna tsrēr zhoghovrdakan vep». (1951). H. B. Masn yerkrord. Yerevan. Haypethrat (**In Armenian**).
65. **Sebeosi** yepiskoposi patmut'iwn. (1939). Baghdatur'eamb dzeragrats', handerdz arrajabaniv yev tsanot'agrut'eambk' i dzern St. Malkhaseants'. Yerevan. Armfan (**In Armenian**).
66. **Strabon.** (1940). K'aghets' yev t'argmanets' H. Acharyan. Yerevan. Pet. hamalsarani hrat. (**In Armenian**).
67. **Toporov V. N.** (1980). Prusskij jazyk. Slovar' I-K. Moskva. «Nauka» (**In Russian**).
68. **T'ovma Artsruni yev Ananun** (1985). Patmut'iwn tann Artsruneats'. Bnagirē hratarakut'yan patrastets', ashkharhabar t'argm. yev tsanot'agr. V. Vardanyan. Yerevan. YePH hrat. (**In Armenian**).
69. **T'umanyan B.** (1968). Hay astghagitut'yan patmut'yun (XIX d. skzbits' minch'ev 1920 t'.). Yerevan. YePH hrat. (**In Armenian**).
70. **Yeremyan S.** (1963). Hayastanē ēst «Ashkharhats'oys't'»-i. Yerevan. HSSH GA hrat. (**In Armenian**).